ԱՅԳ-1 200 ՄՎՏ հզորությամբ ՖՎ Կայան

Հայաստան

Կենսագործունեության պայմանների վերականգնման ծրագիր

3-րդ խմբագրություն, 19/10/2023թ.

Նախքան տեղեկատվությունը բացահայտելը տիտղոսաթերթը և փաստաթղթաշրջանառության վերահսկման էջն անհրաժեշտ է թարմացնել:

Նախքան տեղեկատվությունը բացահայտելը տիտղոսաթերթը և փաստաթղթաշրջանառության վերահսկման էջն անհրաժեշտ է թարմացնել:

Բովանդակություն

1. Համառոտ ակնարկ 6
2. Ներածական 8
3. Հողի ձեռքբերման նորմատիվային շրջանակները 8
   3.1. Հայաստանի Սահմանադրությունը (1995, 2015թ. խմբագ.) 8
   3.2. Հայաստանի օրենքներն ու կանոնակարգերը 9
      3.2.1 Հողային օրենսգիրք և Քաղաքացիական օրենսգիրք..... 9
      3.2.2 «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենք 11
   3.3. Վարկատուների պահանջներ 12
      3.3.1 Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Կատարողական պահանջներ 12
      3.3.2 Ասիական զարգացման բանկի անվտանգության քաղաքականության հայեցակարգ 14
      3.3.3 Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտներ 15
   3.4. Հարկադրված վերաբնակեցման պահանջներ և ծրագրային մոտեցում 17
4. Կարևոր տեղեկություններ Ծրագրի վերաբերյալ 23
   4.1. Ծրագրի իրականացման վայրը 23
   4.3. Ծրագրի տեղանքի նկարագրությունը 28
5 Հողերի ձեռքբերման գործընթաց 31
   5.1. Հողերի ձեռքբերման վերաբերյալ ակնարկ 31
   5.2. Ծրագրի տեղանքը 31
      5.2.1. Ծրագիրն իրականացնող Ընկերության նվիրաբերությունը համայնքներին 32
      5.2.2. Կառավարության բյուջետային աջակցությունը համայնքներին ..36
   5.3 Համայնքային հողի օգտագործում 37
      5.3.1 Ծրագրի ազդեցությունը համայնքային հողի վրա 37
      5.3.2 Համայնքային հողօգտագործում 38
      5.3.3 Տեղանքին մոտեցող ճանապարհ 40
   5.4 Հողօգտագործում այլ ժամանակավոր շինարարության համար 42
6 Սոցիալ-տնտեսական պայմաններ 44
7 Քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ 49

8 Հարկադրված վերաբնակեցման գնահատում և պլանավորում 54
8.1 Վերաբնակեցման սկզբունքներ 54
8.2 Հարկադրված վերաբնակեցման գնահատում 54
8.2.1 Բնակելի տներ և կառույցներ 54
8.2.2Ծառեր և մշակաբույսեր.....54
8.2.3Անասնապահական գործունեություն 55
8.2.4Խոտաբույսերի, վայրի հատապտուղների, վառելափայտի հավաքում և որսորդություն.....55
8.2.5Հարկադրված վերաբնակեցման գնահատման ամփոփագիր.....57
8.3 Արոտի արժեքի հաշվարկ 57
8.4 Կենսագործունեության վերականգնման միջոցառումներ 59
8.4.1 Կենսագործունեության վերականգնման միջոցների հետազոտում.....59
8.4.2 Կենսագործունեության վերականգնման ընտրված միջոցառումներ 53
8.5 Իրավասություն և աջակցություն ստանալու թույլտվություն 57
9 Իրականացման շրջանակ 60
9.1 Դերեր և պարտականություններ..... 60
9.2 Իրականացման ժամանակացույց.....62
9.3 Բյուջե.....64
10 Բողոքարկման մեխանիզմ 66
11 Մշտադիտարկում և գնահատում.....66

Քարտեզների ցուցակ

Քարտեզ 1. Ծրագրի իրականացման վայրը……...…49

Քարտեզ 2. Մոտեցող ճանապարհների տարբերակներ……...26
Քարտեզ 3. Ծրագրի տեղանքը, հողի նախկին սեփականատիրությունը…...33
Քարտեզ 4. Կադաստրային քարտեզ, Թալին և Դաշտադեմ բնակավայրեր.38

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Շահագրգիռ կողմերի ներգրավման հիմնական միջոցառումները ……49
Աղյուսակ 2. Կենսագործունեության վերականգնման հնարավոր միջոցառումների հետազոտում …… 60
Աղյուսակ 3. Աջակցության ստացման իրավունքներ ……58
Աղյուսակ 4. Ժամկետագիր……62
Աղյուսակ 5. Բյուջեն……64

Ցուցապաստառների ցանկ

Ցուցապաստառ 1. Ծրագրի տեղանքը……28
Ցուցապաստառ 2. Ծրագրի տարածքը……30
Ցուցապաստառ 3. Ոռոգման ծրագիր՝ Դաշտադեմ……..……..35
Ցուցապաստառ 4. Գերեզմանատան բարեկարգում՝ Թալին……...36
Ցուցապաստառ 5. Քննարկումների ժամանակ ցույց տրված արևապաշտպան կատուցվածքի օրինակ……..…66
Ցուցապաստառ 6. Անասնաբուժական առողջության թեմայով դասընթաց Զարաֆշան ՀողմԷԿ ԾԱԱ -նց համար (Ուզբեկստան)……68

Նկարների ցանկ

Նկար 1. Ճանապարհի նախագիծը……25
Նկար 2.Հյուսիսային կողմից մոտեցող ճանապարհը……43

1. Համառոտ ակնարկ

Մասդար Արմենիա CSG (այսուհետ՝ «Մասդար» կամ «Կառուցապատող») մասնավոր կառուցապատող ընկերությունը մտադիր է կառուցել և շահագործել ՖՎ կայան («Ծրագիր») Հայաստանի Արագածոտնի մարզի տարածքում: Ծրագրով առաջարկվող օբյեկտը կունենա 200 ՄՎտ տեղակայված հզորություն:

Հայաստանի կառավարության ընտրությունը կանգ է առել Մասդարի վրա, որ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի» (ANIF - ԱՆԻՖ) հետ մշակի Ծրագիրը: Ծրագրի համար հողատարածքը տրամադրվել է Հայաստանի կառավարության կողմից, ինչը նախքան Ծրագրին հատկացվելը հանդիսացել է Թալինի (156,31 հեկտար) և Դաշտադեմի (363,05 հեկտար) համայնքային հող: Ծրագրի համար հողատարածքի ձեռքբերման պարտավորությունն իրականացրել է Հայաստանի կառավարությունը համայնքների հետ կնքված պայմանագրի հիման վրա, փոխանցելով այն ԱՆԻՖ -ին, որը մասնակցություն ունի Ծրագրի իրականացման նպատակով ստեղծված ընկերությունում: ԱՆԻՖ -ը կստորագրի փոխանցման վերաբերյալ համաձայնագիր, որով հողը որպես նվիրաբերություն կհատկացվի Ծրագրին:

ՖՎ կայանի համար Կառավարության մրցույթի պայմաններով պահանջվում է, որ Մասդարը պարտավորվի 320 միլիոն ՀՀ դրամ նվիրաբերել[1] Թալին և Դաշտադեմ համայնքներին, որոնք հանդիսանում են հողատարածքի սեփականատերերը:

Հանրային քննարկման ժամանակ համայնքները նշել են, որ նվիրաբերության պայմանագիրը համարվել է անբավարար մի շարք պատճառներով, հիմնականում պայմանավորված՝ մրցույթի հայտարարումից հետո արժեզրկման հետևանքով նվիրաբերվող գումարի գնողունակության անկմամբ: Կառավարությունը համաձայնել է որպես բյուջետային օժանդակություն (աջակցություն) լրացուցիչ Թալինի համայնքապետարանին (որտեղ ընդգրկված են Թալինը և Դաշտադեմը) տրամադրել 700 միլիոն: Ի լրումն, Կառավարությունը փոխհատուցում է տվյալ համայնքների կողմից սոցիալական ոլորտում իրականացվող ներդրումները: Համայնքներն ու տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատարները գոհ են մնացել հողի ձեռքբերման / հողահատկացման ոլորտում Կառավարության վարած գործընթացի արդյունքում ստացվող օգուտներից:

Ակնկալվում է, որ Ծրագիրը կառաջացնի աննշան կամ փոքր տնտեսական տեղաշարժ Ծրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում, ազդեցություն ունենալով անասնապահական գյուղատնտեսության նպատակով օգտագործվող արոտավայրերի վրա: Ծրագրի տեղանքի տարածքն օգտագործվում է որպես արոտատեղի Դաշտադեմի անասնապահների կողմից, ևև Թալին, Աշնակ և Կաթնաղբյուր համայնքների ավելի քիչ թվով օգտագործողների կողմից: Համայնքի անասնապահներն հասանելիություն ունեն բավականին քանակությամբ այլընտրանքային արոտավայրերի, մինչդեռ Ծրագրի հողատարածքն անասնապահության նպատակների համար ցածրորակ է, նաև դժվար հասանելի:

Հողատարածքից օգտվող անասնապահների հստակ թվաքանակը հայտնի չէ. տարբեր տնտեսություններ նշել են, որ կոնկրետ տարվա սեզոնային և եղանակային հանգամանքներով պայմանավորված՝ կարող են օգտվել այդ հողից: Ազդակիր համայնքների մեծ թվով տնային

[1] «Նվիրաբերել» եզրույթով, ինչպես այն օգտագործված է Ծրագրի ձեռքբերման հետ կապված՝ նախագահական հրամանագրերում, նկատի է առնվում պարտադիր վճարումը, այլ ոչ թե կամավոր նվիրատվությունը:

տնտեսություններ պահում են ոչ մեծ թվաքանակով անասուններ, որոնց ամռանն արածեցնելու են տանում (հաճախ համայնքային հողամասերի) արոտներում:

Ի հավելումն Թալին և Դաշտադեմ համայնքներին ցուցաբերվող անմիջական նվիրաբերության, Ծրագիրը կիրականացնի նաև Կենսագործունեության վերականգնման միջոցառումներ ազդակիր չորս համայնքներում, գլխավորապես ուշադրությունը կենտրոնացնելով անասնապահների վրա, ինչից սակայն օգուտ կքաղեն նաև համայնքների ավելի լայն շրջաններ:

ԿՊՎԾ ծրագրի բյուջեն որոշվել է անասնակերի համար հողի արտադրողականության՝ հայաստանցի գյուղատնտեսի կողմից կատարված հաշվարկի հիման վրա:

Համայնքների հետ մի քանի քննարկումներից հետո՝ որպես փոխհատուցման գերադասելի տարբերակ ընտրվել էր համայնքապետարանին պատկանող կաթի վերամշակման գործարանը: Այդուհանդերձ, տեղական իշխանության այդ առաջարկն ավելի մանրակրկիտ գնահատելուց հետո պարզվել էր, որ մի մասնավոր ներդրող նույնպես դիտարկել է նման նախաձեռնության հնարավորությունը, և որ համայնքապետարանին պատկանող շինություններն այդ նպատակի համար հարմար չեն: Հետագա քննարկումների արդյունքում համայնքն ընտրել է ստորև թվարկված ԿՊՎԾ միջոցառումները.

- Դաշտադեմում ոռոգման համակարգի բարելավման աջակցություն
- Պատսպարանների կառուցում համայնքային արոտավայրերում
- Անասնապահական տնային տնտեսությունների համար շինարարությունում զբաղվածությամբ ապահովման առաջնահերթություն
- Դասընթաց անասնապահների համար
- Դասընթաց կանանց համար կարիերայի առաջխաղացման և զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով

Միջոցառումների առաջարկվող համակցությունը ներառում է կոնկրետ նպատակային աջակցության մեկ հիմնական չափանիշ Դաշտադեմ համայնքի համար, որն ունի ազդեցության ենթարկվող համայնքային արոտավայրերի ավելի մեծ մասնաբաժին, քան մյուս համայնքները, ինչպես նաև չորս միջոցառումներ, որոնք օգուտ կբերեն բոլոր չորս համայնքներին: Այն ներառում է երեք միջոցառում անասնապահներին / անասնապահության վարմանն աջակցելու նպատակով, երկու միջոցառում համայնքների վրա ավելի մեծածավալ ազդեցությամբ, և մեկ միջոցառում, որը նախատեսված է կոնկրետ կանանց աջակցելու համար: Ակնկալվում է, որ այդ բոլոր միջոցառումներն ունենալու են բարձր դրական ազդեցություն ավելի աղքատ տնային տնտեսությունների վրա, որոնք ավելի մեծ կախվածություն ունեն գյուղատնտեսական հողօգտագործման և անասնապահական գործունեությունից: Առանձին բյուջե է հատկացված տնային այն տնտեսություններին օժանդակելու համար, որոնք բավարարում են խոցելիության համապատասխան չափորոշիչներին, հետևաբար դա կարող է թուլացնել Կենսագործունեության միջոցների առաջարկվող վերականգնումից օգտվելու նրանց կարողունակությունը:

Սույն ԿՊՎԾ –ում ընդհանուր գծերով ձևակերպված են հաջող իրականացման և մշտադիտարկման ժամկետները, պատասխանատվություններն ու բյուջեն:

2. Ներածական

Մասդար Արմենիա CSG (Ընկերություն» կամ «Մասդար») մշակում և նախատեսում է կառուցել և շահագործել 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) էլեկտրակայան (ԱՅԳ-1 կամ «Ծրագիր») ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում:

Ծրագրի իրականացման նպատակով ստեղծված ընկերությունը հետաքրքված է Ծրագրի համար միջազգային ֆինանսավորման հայթայթման հարցում: Ծրագրի նպատակն է՝ ԲևՍ տեսանկյուններից կառավարումն իրականացնել այնպես, որ ապահովվի ամբողջական համապատասխանություն գործող բոլոր կանոնակարգերին և միջազգային առաջավոր փորձին: Ի լրումն ՀՀ օրենքների և պահանջների, Ծրագիրը կապահովի համապատասխանությունը Բնապահպանական և Սոցիալական Կայունության վերաբերյալ Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի ստանդարտներին (2012), Ծրագրերի Իրականացման Կատարողականության ՎՋԵԲ պահանջներին (2019) և ԱՋԲ Երաշխիքների պահանջներին (2009):

Ծրագիրը ենթարկվել է ԲՍԱԳ գործընթացի, ՇՄԱԳ վերաբերյալ ստացվել է Նախարարության հավանությունը:

Հետևելով միջազգային պահանջներին, Ծրագիրը պետք է գնահատի հարկադրված վերաբնակեցման հետևանքով առաջացող ազդեցություններն ու փոխհատուցում իրականացնի դրանց համար: Ծրագիրը չի առաջացնում ֆիզիկական տեղահանում: Այդուհանդերձ, ակնկալվում է, որ տեղի կունենա տնտեսական դրության աննշան կամ փոքր տեղաշարժ Ծրագրի իրականացման տարածքում անասնապահական գյուղատնտեսության նպատակով օգտագործվող արոտավայրերի հասանելիության սահմանափակման հետևանքով:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է Ծրագրի Կենսագործունեության Վերականգնման Պլանը (ԿՊՎԾ): Հետամուտ լինելով Վարկատուների և ՀՀ պահանջներին, այստեղ որոշված ու գնահատված են Ծրագրի պատճառով առաջացող տնտեսական տեղաշարժի ազդեցությունները, ինչպես նաև նկարագրված են դրանց հետևանքների մեղմացման միջոցառումները:

ԿՊՎԾ -ը հանդիսանում է ԲՍԱԳ փաթեթի մաս, որը սահմանված կարգով կներառվի ԲՍԿՀ –ում՝ կառուցման և շահագործման փուլերում իրականացվելու նպատակով:

3. Հողի ձեռքբերման նորմատիվային շրջանակները

Ծրագրի ԲևՍ պարտավորությունների նկատմամբ կիրառվում են ստորև նշված պետական քաղաքականությունը, օրենքները, կանոնակարգերն ու վարկատուների պահանջները, ուստի պետք է ապահովվի դրանց հետ համապատասխանությունը, որպեսզի դրանք հաշվի առնվեն Ծրագրի նախագծման (մշակման), շինարարության, շահագործման և շահագործումից դուրս բերման փուլերում:

3.1. Հայաստանի Սահմանադրությունը (1995, 2015թ. խմբագ.)

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հոդված 10-ի համաձայն սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է: Հայաստանի Սահմանադրության Հոդված 60-ի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր

սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և ժառանգելու իրավունք: Ըստ Սահմանադրության, սեփականության օտարումը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական ու համարժեք փոխհատուցմամբ:

3.2. Հայաստանի օրենքներն ու կանոնակարգերը

Հողի ձեռքբերման գործընթացի հետ կապված ՝ Հայաստանի հիմնական օրենքներն ու կանոնակարգերը համառոտ նկարագրված են ստորև: Հարկ է նշել, որ Ծրագրի գործունեության հետ կապված ստորև նշված ոչ բոլոր օրենքներն են կիրառվում, սակայն նկարագրված են այն դեպքի համար, որ դա կարող է տեղի ունենալու հավանականություն ունենալ հետագայում: ԲԼՍ և ընթացակարգային ավելի լայն ոլորտների կարգավորման նպատակով ավելի մանրամասն օրենսդրական հիմքերը տրված են ԲՍԱԳ հիմնական հաշվետվությունում:

3.2.1 Հողային օրենսգիրք և Քաղաքացիական օրենսգիրք

Հողի/սեփականության ձեռքբերման գործընթացը հիմնականում ղեկավարվում է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով:

Հողային օրենսգիրքը (2001) Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը դասակարգում է հողօգտագործման հետևյալ 9 կատեգորիաներում՝

- Գյուղատնտեսական
- Բնակավայրերի
- Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների
- Հատուկ նպատակներով պահպանվող հողատարածքների
- Հատուկ նշանակության
- Անտառային
- Ջրային
- Պահուստային պետական հողերի

Հողերն ըստ դրանց սեփականատիրության կարգավիճակի ընկնում են հետևյալ երեք խմբերի մեջ.

- Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր՝ դրանք անհատներին կամ կազմակերպություններին պատկանող հողերն են, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում
- Համայնքային հողեր՝ դրանք համայնքներին պատկանող հողերն են, որոնք տնօրինվում են իշխանության տեղական մարմինների կողմից: Համայնքային հողերը կարող են չօգտագործվել, օգտագործվել ընդհանուր նպատակներով, օրինակ՝ որպես արոտավայրեր համայնքի անդամների համար, վարձակալությամբ տրվել որևէ անձի կամ կազմակերպության, տնային տնտեսությունների / իրավաբանական անձանց կողմից ապօրինի (անօրինական) օգտագործվել
- Պետական հողեր՝ դրանք այն հողերն են, որոնք պատկանում են ՀՀ կառավարությանը: Պետական հողերը կարող են չօգտագործվել, օգտագործվել հիմնական ճանապարհների, պետական օբյեկտների համար, զինվորական կամ այլ

նպատակներով: Պետական որոշ հողեր կարող են վարձակալվել կամ ապօրինի (առանց գրանցման) օգտագործվել տնային տնտեսությունների / իրավաբանական անձանց կողմից:

Ծրագրի հողերը (այսինքն՝ շինհրապարակի սահմաններում ընկած հողամասը) հատկացվել են Հողային Օրենսգրքի Հոդված 65 -ի 1-ին և 6-րդ մասերին համապատասպան: Հոդված 65 -ի համաձայն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հանրային հողամասերը կառավարության համաձայնությամբ՝ նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական ծրագրերի կամ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով: Համայնքները հողամասերի հատկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների վերաբերյալ տեղեկացվում են զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով: Հողամասերի օգտագործման նպատակներն ու պայմանները պետք է նշվեն Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում: Կառավարության համապատասխան որոշման մեջ պետք է սահմանվեն հողօգտագործման նպատակները, ժամկետներն ու պայմանները:

Հողային Օրենսգրքի հնարավոր նշանակալի և տեղին այլ հոդվածները, որոնք Ծրագրի առնչությամբ դեռևս չեն կիրառվել, ընդհանուր գծերով նկարագրված են ստորև:

Քաղաքացիական Օրենսգրքի Հոդված 210 -ում (ինչպես նաև Հողային Օրենսգրքի Հոդված 50 -ում) ասվում է, որ հողամասի սեփականատերերը/օգտագործողները կարող են հարևան հողամասի սեփականատիրոջից և/կամ այլ հողամասի սեփականատիրոջից պահանջել իրենց տրամադրել նրանց հողամասերի սահմանափակ օգտագործման իրավունք (սերվիտուտ): Սերվիտուտ կարող է սահմանվել հարևան կամ այլ հողամասով անցնելու և երթևեկելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի և խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման և հողաբարելավման նպատակներով: Սերվիտուտը կարող է լինել կամավոր և հարկադիր, եթե կողմերի միջև ձեռք չի բերվում համաձայնություն սերվիտուտի վերաբերյալ: Քաղաքացիական Օրենսգրքի Հոդված 212 (3) -ը նախատեսում է, որ խողովակաշարերի, ճարտարագիտական ենթակառուցվածքների պահպանման ու սպասարկման համար, որոնք ստեղծված են հասարակական կարիքներին ծառայելու նպատակով, սահմանվում է անվճար, հարկադիր և մշտական սերվիտուտ:

Հողային Օրենսգրքի Հոդվածներ 102 –ում և 104 –ում և Քաղաքացիական Օրենսգրքի Հոդված 218 –ում սահմանված է հանրային շահի գերակայության կարգով հողամասի ձեռքբերումը հողի վրա հիմնված գերակա հանրային շահերի բացառիկ դեպքերում՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Այս պահանջն ընդունվել է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում (այսուհետ՝ «Օրենք») հետևելով Սահմանադրության և վերոնշյալ իրավական ակտերի պահանջներին: Այս Օրենքը համարվում է երկրում հողի ձեռքբերման ու փոխհատուցման ընթացակարգերը կարգավորող հիմնական օրենք: Օրենքը սահմանում է հանրային և պետական շահերի նպատակով սեփականության ձեռքբերման հիմքերն ու ընթացակարգը, օտարված սեփականության համար տրվող փոխհատուցման ընթացակարգը, հանրային և պետական շահերի համար սեփականության ձեռքբերման նպատակներն ու սկզբունքները, և հանրային ու պետական շահերի ճանաչման ընթացակարգը:

Օրենքի Հոդված 3-ի առաջին կետում սահմանված է, որ հանրային ու պետական նպատակներով սեփականության ձեռքբերման սահմանադրական հիմքը բացառապես հանդիսանում է գերակա հանրային շահը, կիրառելով հետևյալ սահմանադրական պահանջները՝ ա) հողի ձեռքբերումն ըստ օրենքի, և բ) ձեռք բերված հողի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման տրամադրում:

Վերոնշյալ Օրենքի Հոդված 4 -ի առաջին կետում ներկայացվում են հանրային և պետական նպատակներով սեփականության ձեռքբերման համար հանրության գերակա շահերի բացառիկ

դեպքերի որոշման սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ կետում ներկայացվում են հնարավոր նպատակները, որոնց հետևում է հանրության բացառիկ գերակա շահը: Օրենքը սահմանում է հիմնարար սկզբունքը, որի համաձայն՝ ա) հանրության շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, բ) հանրության գերակա շահի արդյունավետ իրագործում չի կարող ապահովվել, եթե տվյալ սեփականությունը չօտարվի, գ) սեփականության օտարումը չպետք է չիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրության շահը պետք է գերակա ճանաչվի կառավարության որոշմամբ, ե) հանրության գերակա շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

Օրենքը կարգավորում է նաև սեփականության ձեռքբերման պահանջները, սեփականության օտարման հետ կապված փոխհատուցումը և որոշումների կայացմանը վերաբերող կանոնները:

Մասնավորապես, Օրենքի Հոդված 5 –ով սահմանվում է, որ հողամասի հետ միասին օտարման ենթակա է նաև դրա հետ առնչվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), որը գտնվում է հողամասի վրա, ինչպես նաև հողամասի վրա գոյություն ունեցող բոլոր բարելավումները: Շենքի կամ կառույցի օտարման դեպքում օտարման ենթակա են նաև դրանց համապատասխան սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

3.2.2 «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենք

2006թ. վավերացված Օրենքը սահմանում է կարգավորումներ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին («սեփականատերեր») սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ ՀՀ օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ հաշվառված բոլոր օբյեկտների (շարժական և անշարժ գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) համար (այսուհետ՝ «օտարվող սեփականություն») և կարգավորումներ գույքի ձեռքբերման և փոխհատուցման հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Մասնավորապես.

- Հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության սահմանած կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռքբերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրությունը չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունը ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմնին և/կամ դատարան:
- Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15% (տասնհինգ տոկոս) ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքին (2005) համապատասխան:
- Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ են

որոշվում:

- Եթե օտարման պայմանագրի նախագիծն ուղարկելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, օտարման պայմանագիր չի կնքվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության ձեռքբերման գումարը փոխանցել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին՝ այդ մասին եռօրյա ժամկետում պատշաճ կերպով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ:
- Եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, չի կնքվում օտարման պայմանագիրը, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

Օրենքը սահմանում է հանրային և պետական շահերի ապահովման նպատակով օրտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքերն ու երաշխիքները, նշելով որ օտարվող սեփականության սեփականատերը, մինչև դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումն իրավունք ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը համապատասխան: Օրենքը սահմանում է օտարվող սեփականության նկատմամբ որոշակի սահմանափակումներ, որը վերաբերում է կառավարության սահմանած կարգով օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվան: Լրացուցիչ բարելավումների համար, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում (հաշվի առնելով Օրենքով սահմանված երաշխիքները), եթե դրանք կիրառվել են վերոնշյալ օրվանից հետո:

Մինչ օրս Ծրագրի առնչությամբ չի պահանջվել այս Օրենքի դրույթների կիրառում հողի ձեռքբերման գործընթացի համար:

3.3. Վարկատուների պահանջներ

3.3.1 Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Կատարողական պահանջներ

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականություն (ԲՍՔ) (2019) և ուղեկցող Կատարողական Պահանջ (PR-ԿՊ) 5-ը. Հողի օտարում, Ծրագրի հետ կապված հողի օտարման պատճառով հողօգտագործման սահմանափակումներ և հարկադրված վերաբնակեցման ազդեցություններ, այդ թվում՝ հողօգտագործման ու ակտիվների և բնական պաշարների հասանելիության սահմանափակումներ, որի հետևանքով կարող է առաջանալ ֆիզիկական տեղաշարժ (տեղահանում, հողամասի կամ կացարանի կորուստ), և/կամ տնտեսական դրության տեղաշարժ (հողամասի, ակտիվների կորուստ կամ հողօգտագործման, ակտիվների և բնական պաշարների օգտագործման սահմանափակումներ, որը բերում է եկամուտի աղբյուրների կամ գոյատևման այլ միջոցների կորստի):

«Հարկադրված վերաբնակեցում» եզրույթով նկատի են առնվում ինչպես ազդեցությունները, այնպես էլ այդ ազդեցությունների մեղմման ու փոխհատուցման համար նախատեսված գործընթացները: Վերաբնակեցումը համարվում է հարկադրված, երբ ազդեցությանը ենթարկվող անձինք կամ համայնքները իրավունք չունեն հրաժարվել հողամասի օտարումից կամ մերժել հողամասի, այլ ակտիվների և բնական պաշարների օգտագործման

սահմանափակումները, նույնիսկ, եթե հարկադրական վերաբնակեցումը կիրառվում է բանակցային գործընթացից հետո՝ որպես վերջին միջոց: Եթե պատշաճ կառավարում չիրականացվի, հարկադրված վերաբնակեցումը կարող է երկարաժամկետ դժվարություններ և աղքատություն առաջ բերել ազդակիր անձանք համար և համայնքներում, ինչպես նաև բնապահպանական վնասներ և անբարենպաստ սոցիալ-տնտեսական ազդեցություններ առաջացնել այն շրջաններում, որտեղ նրանց տեղաշարժել են: Պատվիրատուն պետք է դիտարկի ծրագրի այլընտրանքային, իրականացնելի նախագծեր ու տարածքներ հողամասի օտարումից կամ հողի, այլ ակտիվների և բնական պաշարների օգտագործման սահմանափակումներից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար, միևնույն ժամանակ հավասարակշռելով բնապահպանական, սոցիալական և ֆինանսական ոլորտների հետ կապված ծախսումներն ու շահերը, հատուկ ուշադրություն հատկացնելով գենդերային և խոցելի անձանց վրա ազդեցություններին:

Եթե նախագծման միջոցով դրանից հնարավոր չէ խուսափել, ապա պետք է նվազագույն մակարդակի հասցնել տեղաշարժը, ինչպես նաև մանրակրկիտ կերպով պլանավորել և իրականացնել համապատասխան միջոցառումներ ազդակիր անձանց և համայնքների վրա անբարենպաստ ազեցությունների մեղմման համար:

ԿՊ 5 -ի նպատակներն են՝

- Խուսափել հարկադիր վերաբնակեցումից, կամ, եթե դա անխուսափելի է, հարկադրված վերաբնակեցման մակարդակը նվազագույնի հասցնել այլընտրանքային ընդունելի նախագծերի և տարածքների ուսումնասիրմամբ
- Թույլ չտալ հարկադիր տեղահանումներ
- Մեղմել հարկադրված վերաբնակեցման հետևանքով ազդակիր անձանց պատճառվող անխուսափելի սոցիալ-բնապահպանական բացասական ազդեցությունները՝ (i) ժամանակին փոխհատուցում տրամադրելով ակտիվների կորստի համար՝ դրանց փոխարինման լրիվ արժեքով, և (ii) ապահովելով, որ հողամասի օտարումը, հողի, այլ ակտիվների և բնական պաշարների օգտագործումն ու հարկադրված վերաբնակեցման գործողություններն իրականացվեն բովանդակալից խորհրդատվության, մասնակցության և տեղեկատվության բացահայտման պայմաններում՝ ԿՊ 10 -ի (Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմերի ներգրավում) պահանջներին համապատասխան
- Մինչ տեղաշարժը եղած մակարդակների հետ համեմատությամբ բարելավել, կամ առնվազն վերականգնել ազդակիր անձանց գոյատևման միջոցներն ու կենսամակարդակը, և
- Բարելավել ֆիզիկապես տեղաշարժված անձանց կենսապայմանները համարժեք բնակտարածքի (ներառյալ՝ հիմնական կոմունալ ծառայությունների) տրամադրմամբ՝ տարաբնակեցման վայրերում բնակտարածքի տիրապետման և օգտագործման իրավական երաշխիքների տրամադրմամբ հանդերձ

ԿՊ 10 -ի (Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմերի ներգրավում) նպատակներն են՝

- Ուրվագծել համակարգված մոտեցում շահագրգիռ կողմերի ներգրավմանը, ինչը պատվիրատուին հնարավորություն կտա կառուցողական փոխհարաբերություններ հաստատել ու պահպանել շահագրգիռ կողմերի հետ
- Միջոցներ ապահովել ծրագրի իրականացման ողջ ժամկետի ընթացքում ծրագրի շահագրգիռ կողմերի արդյունավետ և գործուն ներգրավման համար
- Ապահովել, որ բացահայտվի բնապահպանական ու սոցիալական ոլորտներին վերաբերող համապատասխան տեղեկատվությունը և ծրագրի շահագրգիռ կողմերի

հետ անցկացվեն բովանդակալից խորհրդակցություններ, հաշվի առնելով քննարկման գործընթացի արդյունքում ստացված արձագանքները, երբ և որտեղ դա նպատակահարմար է, և

- Ապահովել, որ շահագրգիռ կողմերից ստացված բողոքները պատշաճ կերպով արձագանքվեն ու կարգավորվեն

Ծրագիրը տնտեսական վիճակի տեղաշարժ կառաջացնի ըստ ԿՊ 5 -ի սահմանման: Ակնկալվում է, որ Ծրագիրը կառաջացնի համայնքներում գտնվող անասնապահների և հնարավոր անասնապահների գոյատևման միջոցների սահմանափակ խախտում, ուստի անհրաժեշտ կլինի Կենսագործունեության Վերաբնակեցման Գործողությունների Պլան (ԿՊՎԾ): Սույն փաստաթղթի ողջ բովանդակության մեջ ընդգծված են ՎԶԵԲ Հարկադիր Վերաբնակեցման և Տնտեսական Տեղաշարժման Քաղաքականության և ԿՊ 5 -ի հետ կապված համապատասխան առանձնահատուկ պահանջները:

3.3.2 Ասիական զարգացման բանկի անվտանգության քաղաքականության հայեցակարգ

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Անվտանգության (երաշխիքների) քաղաքականության հայեցակարգը (հունիս, 2009թ.) մանրամասն տեղեկություններ է պարունակում Անվտանգության Պահանջներ 2 -ի (Հարկադիր վերաբնակեցում) վերաբերյալ, որտեղ ներառված են Հարկադիր վերաբնակեցման գործառնական ղեկավարման բաժիններ: Անվտանգության Պահանջներ 2 -ի (Հարկադիր վերաբնակեցում) նպատակներն են՝ խուսափել հարկադրված վերաբնակեցումից, որտեղ դա հնարավոր է, նվազագույնի հասցնել հարկադրված վերաբնակեցումը ուսումնասիրելով ծրագրի և տարածքի (վայրի) այլընտրանքներ, իրապես բարելավել կամ առնվազն վերականգնել տարհանված բոլոր անձանց գոյատևման միջոցները՝ համեմատած մինչ ծրագիրը եղած մակարդակների հետ, և բարելավել տարհանված անապահով ու խոցելի այլ խմբերի կենսամակարդակը:

Անվտանգության պահանջներ 1. Բնապահպանական միջոցառումներ բաժինն ընդգրկում է տեղեկատվության բացահայտման և շահագրգիռ կողմերի ներգրավման վերաբերյալ դրույթներ, որոնց նպատակն է՝

- Իրականացնել բովանդակալից քննարկումներ ազդակիր անձանց հետ՝ նպաստելով վերջիններիս գիտակցված մասնակցությանը: Ապահովել կանանց մասնակցությունն այդ քննարկումներին
- Ծրագրի նախապատրաստական վաղ գործընթացում ներգրավել շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ազդակիր անձանց և մտահոգված հասարակական կազմակերպություններին՝ ապահովելով, որ նրանց տեսակետներն ու մտահոգությունները հաղորդվեն որոշում կայացնողներն և վերջիններիս կողմից ըմբռնվեն ու հաշվի առնվեն
- Բնապահպանական ազդեցություններին անդրադառնալու նպատակով անհրաժեշտության դեպքում շարունակել քննարկումները շահագրգիռ կողմերի հետ ծրագրի իրականացման ողջ ընթացքում
- Ստեղծել բողոքների կարգավորման մեխանիզմ ազդակիր անձանց՝ ծրագրի բնապահպանական բնութագրերի վերաբերյալ ունեցած մտահոգությունների և բողոքների ստացման և լուծման գործընթացը դյուրին դարձնելու նպատակով

ԱԶԲ Տեղեկատվության հասանելիության քաղաքականությունը (սեպտեմբեր, 2018թ.) հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է բացահայտման (հրապարակման) ղեկավարող սկզբունքների և բացառությունների վրա: Այստեղ ներառվում են քաղաքականության հետևյալ սկզբունքները՝

- Հստակ, ժամանակին և պատշաճ բացահայտում: ԱԶԲ –ը հստակ, ժամանակին և պատշաճ կերպով բացահայտում է իր գործառնություններին վերաբերող տեղեկատվությունը շահագրգիռ կողմերի կարողունակությունը մեծացնելու, ԱԶԲ հետ կառուցողական փոխգործակցության և արդյունավետ կառավարման խրախուսման նպատակով
- Տեղեկատվության նախաձեռնողական բացահայտում: ԱԶԲ –ը նախաձեռնողականորեն և ճիշտ ժամանակին բացահայտում է իր գործառնությունների մասին՝ գիտելիքի վրա հիմնված արգասիքներն ու տեղեկությունները՝ նպատակ ունենալով նպաստել ԱԶԲ -ի որոշումների կայացման գործընթացին մասնակցությանը: Չնայած ԱԶԲ վեբ կայքը մնում է որպես նախաձեռնողական հրապարակման հիմնական միջոց, ԱԶԲ –ն օգտագործում է նաև համապատասխան այլ միջոցներ տեղեկատվության հրապարակման և փոխանցման նպատակով:
- Տեղեկությունների տրամադրում ծրագրի ազդակիր անձանց և շահագրգիռ կողմերին: ԱԶԲ -ը սերտորեն շփվում է իր վարկառուների և հաճախորդների հետ՝ ԱԶԲ ծրագրերի մասին հաղորդելու նպատակով ԾԱԱ -նց և շահագրգիռ այլ կողմերի հետ երկկողմանի կապի ապահովման համար: Սա արվում է սահմանված ժամկետի ընթացքում՝ համապատասխան լեզուների օգտագործմամբ՝ այնպես, որ ԾԱԱ -նք և շահագրգիռ այլ կողմերը կարողանան նշանակալի ավանդ ունենալ ծրագրի մշակման և իրականացման գործում:

3.3.3 Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտներ

ՄՖԿ բնապահպանական և սոցիալական կայունության շրջանակը սահմանում է ՄՖԿ մոտեցումը կայունությանն ու շրջակա միջավայրին: Այնտեղ նկարագրված են ակտիվների զարգացման և կառավարման հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման առաջավոր մեթոդները:

Կատարողական ստանդարտ 5-ում նշվում է, որ ծրագրի հետ կապված՝ հողամասի օտարումը և հողօգտագործման սահմանափակումները կարող են բացասական ազդեցություններ ունենալ այդ տարածքն օգտագործող համայնքների և անձանց վրա: Պետք է կազմվի վերաբնակեցման գործողությունների պլան (ֆիզիկական տեղաշարժ) կամ Կենսագործունեության վերականգնման պլան (տնտեսական տեղաշարժ) հողամասի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների անբարենպաստ սոցիալ-տնտեսական ազդեցությունները գնահատելու, կանխատեսելու և դրանցից խուսափելու համար, կամ եթե հնարավոր չէ խուսափել, ապա նվազագույնի հասցնելու այդ ազդեցությունները՝ (i) տրամադրելով փոխհատուցում ակտիվների կորստի դիմաց՝ դրանց փոխարինման արժեքի չափով, և (ii) ապահովելով, որ վերաբնակեցման գործողություններն իրականացվեն ազդեցության ենթարկվողներին տեղեկատվության բացահայտմամբ, խորհրդակցությամբ և քննարկումներին նրանց պատշաճ տեղեկացված (գիտակցված) մասնակցությամբ. նաև անհրաժեշտ է բարելավել կամ վերականգնել տարաբնակեցված անձանց համար գոյատևման միջոցների ստացման հնարավորություններն ու նրանց կենսամակարդակը, ինչպես նաև բարելավել ֆիզիկապես տեղահանված անձանց կենսամակարդակը:

Ծրագրի նկատմամբ կիրառվում է հարկադրված վերաբնակեցումն ըստ ՄՖԿ ԿՍ 5 -ի: Ծրագրի գործունեությանը չի հետևի ֆիզիկական տեղաշարժ (ինչպես նկարագրված է ստորև՝ 6-րդ գլխում), սակայն այն կառաջացնի տնտեսական դրության չնչին կամ փոքր տեղաշարժ՝ այնպես, որ պետք է պատրաստել Կենսագործունեության միջոցների վերականգնման պլան ՄՖԿ ԿՍ 5 -ին համապատասխան:

Սույն փաստաթղթի բովանդակ ծավալում՝ ըստ կիրառելիության, ընդգծված են ՄՖԿ ԿՍ-5 -ի և ՄՖԿ ԿՍ-5 -ի ղեկավար ցուցումների առանձնահատուկ պահանջները:

Ի լրումն, կօգտագործվեն ՄՖԿ հետևյալ ուղեցույցերը որպես ծրագրի շրջանակում վերաբնակեցման և խորհրդակցությունների տրամադրման գործընթացի վերաբերյալ միջազգային առաջավոր փորձի չափանիշներ՝

- ՄՖԿ ձեռնարկ վերաբնակեցման գործողությունների պլանի կազմման համար
- ՄՖԿ շահագրգիռ կողմերի ներգրավում - Տեղեկատու ձեռնարկ ձևավորվող շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գործարարությամբ զբաղվող ընկերությունների համար
- ՄՖԿ առաջավոր փորձի ուղեցույց՝ Ծրագրի ազդակիր համայնքների բողոքների կարգավորում, և ՄՖԿ առաջավոր փորձի ձեռնարկ՝ Ավելի լավ գործարարություն հանրության հետ արդյունավետ խորհրդակցությունների և տեղեկատվության հրապարակման միջոցով:

3.4. Հարկադրված վերաբնակեցման պահանջներ և ծրագրային մոտեցում

Ստորև բերված աղյուսակը ուրվագծում է հարկադրված վերաբնակեցման պահանջները՝ համաձայն պետական օրենքի և Վարկատուի պահանջների: Երբ պահանջները տարբերվում են, ապա կիրառվում է ամենախիստ պահանջը: Ստորև բերված աղյուսակը նաև ամփոփում է ծրագրային մոտեցումը յուրաքանչյուր պահանջի նկատմամբ:

Տեսանկյուն	Ազգային օրենսդրություն	Վարկատուի պահանջներ	Ծրագրային մոտեցում
Հանրային հողի հատկացում ներդրումների / ծրագրերի համար	Համայնքների սեփականության տակ գտնվող պետական հողերը կարող են Կառավարության համաձայնությամբ և նվիրատվության պայմանագրի, ինչպես նաև անհատույց սեփականության իրավունքի հիման վրա հատկացվել սոցիալական կամ բարեգործական ծրագրերի կամ ներդրումային ծրագրերի իրականացման համար, որոնք հաստատված են Հայաստանի կառավարության կողմից: Համայնքային հողերը նույնպես կարող են փոխանցվել կենտրոնական կառավարությանը, որոնք կարող են հետագայում հատկացվել կոնկրետ ներդրման համար:	Պատվիրատուները (այսինքն՝ Մասդար ԱՅԳ-1 կամ Ընկերություն) պետք է համագործակցեն / աջակցեն / գնահատեն կառավարության տիրապետման տակ գտնվող հողի ձեռքբերման / հատկացման գործընթացը՝ համապատասխանեցնելու ԿՍ5 / ԿՊ5 պահանջներին, ներառյալ հետևյալը՝ Պետք է խուսափել վտարումներից և բռնի ունեզրկումից (ներառյալ հանրային հողերի ոչ օրինական օգտագործողները): Հողօգտագործողների վրա ազդեցությունները պետք է հատուցվեն և վերականգնվի նրանց կենսապահովումը: Պետք է անկացվեն խորհրդակցություններ, հաշվի առնվեն խոցելի խմբերը և իրականացվի մշտադիտարկում, ինչպես մանրամասն ներկայացված է սույն աղյուսակի հաջորդ կետերում:	Գնահատել կառավարության տիրապետման տակ գտնվող հողերի ձեռքբերման/հատկացման գործընթացը և իրականացնել (ուղղակիորեն կամ կառավարությանը աջակցելով/ խորհուրդ տալով) լրացուցիչ միջոցառումներ՝ ազգային ընթացակարգերի և վարկատուների պահանջների միջև հայտնաբերված բացերը հասցեական դարձնելու համար:

Վերաբնակեցումից խուսափում	Օրենքը սահմանում է կոնկրետ իրավիճակներ, որոնց դեպքում թույլատրվում են հողի օտարման տարբեր տեսակներ, այդ թվում՝ հարկադրական օտարումներ: Սույն օրենքը կիրառվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքի սեփականություն հանդիսացող գույքի և բոլոր այլ գույքերի, շարժական և անշարժ գույքի, գույքային իրավունքների, արժեթղթերի և այլնի նկատմամբ, որոնք գտնվում են, գրանցված են Հայաստանում՝ համաձայն օրենսդրության և կանոնակարգերի:	Պատվիրատուն պետք է դիտարկի իրագործելի այլընտրանքային ծրագրի նախագծերը և տեղանքները՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու հողի օտարումը կամ հողօգտագործման, այլ ակտիվների և բնական ռեսուրսների սահմանափակումները՝ միաժամանակ հավասարակշռելով բնապահպանական, սոցիալական և ֆինանսական ծախսերն ու օգուտները և առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գենդերային և խոցելի անձանց վրա ազդեցություններին: Այն դեպքերում, երբ նախագծման միջոցով հնարավոր չէ խուսափել, ապա տեղաշարժը պետք է նվազագույնի հասցվի, և ազդակիր անձանց և ընդունող համայնքների վրա բացասական ազդեցությունները մեղմելու համար պետք է մանրակրկիտ պլանավորվեն և իրականացվեն համապատասխան միջոցառումներ: Միայն տնտեսական տեղաշարժեր պարունակող նախագծերի դեպքում պատվիրատուն կմշակի ԿՊՎԾ՝ փոխհատուցելու ԾԱԱ-նց (Ծրագրի ազդակիր անձանց) և/կամ համայնքներին անցումային աջակցությամբ և հնարավորություններով՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու իրենց եկամուտներ ստանալու միջոցները, արտադրության ծավալներն ու կենսամակարդակը:	Հողամասը Ծրագրի կողմից հատկացվել է կառավարությանը՝ հաջորդելով ներդրումային ծրագրերի համար հանրային և համայնքային հողերի նվիրաբերության իրավական գործընթացին: Ճանապարհային մուտքի կամ հնարավոր այլ օգտագործման համար հողի լրացուցիչ ձեռքբերմամբ (օրինակ՝ շինարարության ընթացքում Գլխավոր Կապալառուի կողմից հողի ժամանակավոր վարձակալումը) լիովին հնարավոր կլինի խուսափել ֆիզիկական տեղաշարժից և խուսափել կամ նվազագույնի հասցնել տնտեսական տեղաշարժը: Եթե հնարավոր չէ լիովին խուսափել (օրինակ՝ Ծրագրի հողն օգտագործող համայնքային անասնապահները), ապա արդեն նախագծվել է փոխհատուցում այս ԿՊՎԾ-ի միջոցով: Ծրագրի պատճառով հետագա տնտեսական տեղաշարժի անհավանական դեպքի պարագայում կպատրաստվի ԿՊՎԾ-ի լրացումհավելված:

Շահագրգիռ կողմի ներգրավվածություն և տեղեկատվության հասանելիություն	Համայնքային հողերի հատկացման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվում են հանրային լսումներ և համայնքային հանդիպումներ՝ ապահովելու համայնքային հողերի հատկացման թափանցիկ և մասնակցային մոտեցում: Մասնավոր սեփականության համար գույքի սեփականատիրոջը և սեփականության իրավունք ունեցող անձանց ուղարկվում է ձեռքբերվելիք գույքի նկարագրության արձանա-գրության պատճենը, ինչպես նաև ձեռքբերվելիք գույքի պայմանագրի նախագիծը: Գույք ձեռք բերողը պետք է տեղեկատվություն տրամադրի փոխհատուցումը դատարան կամ նոտարական դեպոզիտային հաշվին փոխանցելու մասին: Եթե ձեռք բերողը նախնական հետազոտություն է անցկացնում ձեռքբերվելիք գույքի վերաբերյալ, ապա մինչև դրա հարուցումը գույքի սեփականատիրոջը, տիրապետողին և օգտագործողին պետք է տրամադրվի համապատասխան տեղեկատվություն այդ վարույթի բնույթի և առարկայի, իրավական հետևանքների վերաբերյալ:	Պատվիրատուն կփոխգործակցի հողի ազդակիր սեփականատերերի և օգտագործողների հետ շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցով: Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը պետք է ներառի տեղեկատվություն վերաբնակեցման տարբերակների, այլընտրանքների և ընտրանքային տարբերակների վերաբերյալ: Պատվիրատուն կբացահայտի համապատասխան տեղեկատվությունը փոխհատուցման վճարումների պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման, Կենսագործունեության վերականգնման և վերաբնակեցման աշխատանքների ընթացքում: Վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերը պետք է ժամանակին հրապարակվեն ԾԱԱ-նց համար հասկանալի լեզվով: ԾԱԱ-ների հետ պետք է անցկացվեն բովանդակալից հանրային խորհրդակցություններ: ԾԱԱ-ները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների և տարբերակների, ինչպես նաև վերաբնակեցման այլընտրանքների մասին:	Ծրագրի համար իրականացվել է շահագրգիռ կողմերի ներգրավման լայն գործընթաց, ներառյալ Ծրագրի տեղանքում հողօգտագործման և տնտեսական տեղաշարժի, դրական և բացասական ազդեցությունների, մեղմացման ռազմավարությունների, ճանապարհների հասանելիության և Կենսագործունեության միջոցների վերականգնման տարբերակների քննարկումը: Հատուկ ջանքեր են գործադրվել՝ հեշտացնելու համայնքի անդամների մասնակցությունը հողը նվիրաբերած համայնքների, ինչպես նաև մոտակա այլ համայնքների հնարավոր հողօգտագործողների համար: Առաջարկվել են ԾԱԱ-նց հետ հատուկ թիրախային խմբեր, սակայն ԾԱԱ-նք հիմնականում նախընտրել են իրենց մտահոգություններն ու տարբերակները բարձրաձայնել բաց հանրային հանդիպումների ժամանակ՝ ավելի լայն համայնքի հետ: Հետագա խորհրդակցությունները համայնքների և ԾԱԱ-նց հետ կիրականացվեն ԿՊՎԾ-ի հրապարակման և ԿՊՎԾ-ի իրականացման ընթացքում: Իրականացնել Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (ՇԿՆՊ) և բողոքարկման արտաքին մեխանիզմը Ծրագրի ազդակիր համայնքների հետ շարունակական հաղորդակցություն ապահովելու և համայնքի անդամների կողմից Ծրագրի ակնկալիքները կառավարելու համար:

Իրավասություն և փոխհատուցում	Գույքի նկատմամբ փաստաթղթային սեփականության իրավունք ունեցող անձինք իրավասու են ստանալ փոխհատուցում օտարվող հողի, ծրագրի հետևանքով պատճառված վնասների/քանդման և կորցրած բերքի համար, կամ եթե նրանց հողերը չեն օտարվել, սակայն մասնակիորեն օգտագործվել են հանրային ծրագրերի համար (սերվիտուտ): Այն անձինք, ովքեր չունեն ակտիվների նկատմամբ «ֆորմալ» օրինական իրավունքներ, բայց կարող են ունենալ այդպիսիք, պետք է գրանցեն իրենց իրավունքները՝ համաձայն օրենքի, 15 օրվա ընթացքում, մասնավոր սեփականության հարկադրական օտարման իրավունքի մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ փոխհատուցման իրավունք ստանալու համար: Գույքի ձեռքբերման սեփականության իրավունք ունեցողները փոխհատուցվում են ձեռք բերված գույքի փոխհատուցման գումարից: Գույքի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ձեռք բերված գույքի համար համարժեք փոխհատուցում՝ գումարած դրա շուկայական արժեքի 15%-ը: Շուկայական արժեքը գույքի ամենահավանական շուկայական գինն է, որը կարող է որոշվել գույքի՝ որակավորված անկախ գնահատողի կողմից: Եթե օտարված գույքի համար բաց կամ մրցակցային շուկա չկա, գույքի շուկայական արժեքը որոշվում է այնպիսի մեթոդով, որը դատարանի կողմից կգնահատվի արդարացի: Բերքի ոչ «ֆորմալ» կորուստների կամ ոչ «ֆորմալ» (ապօրինի) շենքերի / շինությունների համար առանձին փոխհատուցում չի հաշվարկվում:	Պատվիրատուները պետք է առաջարկեն տեղահանված համայնքներին և անձանց փոխհատուցում ակտիվների կորստի համար ամբողջական փոխարինման արժեքով, ինչպես նաև այլ օգնություն՝ ապահովելու, որ Կենսագործունեության միջոցները ողջամտորեն վերականգնվեն: Այնտեղ, որտեղ Կենսագործունեության միջոցները հիմնված են հողի վրա, պատվիրատուն կառաջարկի հողի հիման վրա փոխհատուցում: Պատվիրատուն կտիրապետի ձեռք բերված հողին և հարակից ակտիվներին միայն այն բանից հետո, երբ փոխհատուցումը հասանելի լինի, և վերաբնակեցման վայրերն ու տեղափոխման նպաստները տրամադրվեն: Պատվիրատուն հնարավորություններ կտրամադրի տեղահանված համայնքներին և անձանց՝ Ծրագրից քաղելու համապատասխան զարգացման օգուտներ: Պատվիրատուն կսահմանի իրավասության համար վերջնաժամկետ, որից հետո հողի հետ կապված ցանկացած բարելավում փոխհատուցման համար իրավասու չի լինի: Վերջնաժամկետին վերաբերող տեղեկատվությունը լավ կփաստաթղթավորվի և կտարածվի ծրագրի ամբողջ տարածքում: Սեփականության պաշտոնական իրավունք ունեցող ԾԱԱ-նք պետք է փոխհատուցվեն կորցրած հողի / այլ ակտիվների համար: Սեփականության օրինականացվելի իրավունք ունեցող ԾԱԱ-նք իրավունք ունեն փոխհատուցվելու կորցրած հողերի և ակտիվների համար (որոշ ծրագրերում, որոշ դեպքերում միայն իրենց ակտիվներն օրինականացնելուց հետո): Սեփականության օրինական իրավունք չունեցող ԾԱԱ-նք իրավունք ունեն փոխհատուցում (նպաստ) ստանալ կորցրած ոչ հողային ակտիվների համար: Վարձակալված հողերի կորուստներ. Կանխիկ դրամով համախառն եկամուտի փոխհատուցման միջոցով կորսված եկամուտի փոխարինման հիման վրա՝ բազմապատկած վարձակալման մնացած տարիներով, կամ հողօգտագործումը փոխարինելու միջոցով:	Թե «ֆորմալ» / օրինական և թե ոչ «ֆորմալ» հողօգտագործողները ստանալու են փոխհատուցում: Ծրագիրը չի առաջացնում ֆիզիկական տեղաշարժ: Ազդեցությունները հողի հիման վրա Կենսագործունեության նկատմամբ աննշան են, հողի փոխհատուցման համար հողատարածք չի պահանջվում, քանի որ առկա են մեծ քանակությամբ համայնքային արոտավայրեր, և անասնապահությունը սահմանափակված չէ հասանելի հողի բացակայությամբ: Համայնքների հիման վրա Կենսագործունեության միջոցների վերականգնման միջոցառումներ կիրականացվեն Ծրագրի համար հող տրամադրող համայնքների և հողատարածքներում ոչ ֆորմալ (ապօրինի) կերպով անասուններին արածեցնող այլ համայնքների համար: Կենսագործունեության միջոցների վերականգնման միջոցառումները պետք է կենտրոնացված լինեն անասնաբուծության կառավարման, գյուղատնտեսական գործունեության և խոցելի խմբերի վրա: Մոտեցող ճանապարհների կառուցման կամ ժամանակավոր շինարարական հողօգտագործման հետևանքով ցանկացած լրացուցիչ հարկադրված վերաբնակեցման ազդեցություն (օրինակ՝ չնչին ազդեցությունները մշակովի հողատարածքների վրա՝ որպես հետևանք ճանապարհի լայնացման) պետք է փոխհատուցվի ամբողջական փոխարինման ծախսերի չափով՝ գումարած շուկայական արժեքի 15%-ը: Ճանապարհաշինությունը կամ ժամանակավոր շինարարական հողօգտագործումը չպետք է հանգեցնի ֆիզիկական տեղաշարժի:

Աջակցություն խոցելի խմբերին	Հողերի ձեռքբերման և օտարման համակարգը նմանատիպ է բոլոր քաղաքացիների և կազմակերպությունների համար: Չեն դիտարկվում խոցելի խմբերի կորցրած եկամուտների և Կենսագործունեության, փոխհատուցման կամ վերաբնակեցման ծախսերի աջակցության լրացուցիչ միջոցառումները:	Վարկատուների չափանիշները պահանջում են մեղմացնող միջոցառումներ և վերականգնում եկամուտների / Կենսագործունեության միջոցների վրա ազդեցությունների համար, վերաբնակեցման աջակցություն տեղափոխման ընթացքում, ինչպես նաև կենցաղի բարելավում տեղափոխված խոցելի բնակչության համար, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, աղքատության մեջ ապրողներով, կանանցով, տարեցներով և հաշմանդամություն ունեցողներով: Այս ԾԱԱ-նք պետք է նույնականացվեն, և հատուկ աջակցություն տրամադրվի՝ վերականգնելու / բարելավելու նրանց նախածրագրային Կենսագործունեության մակարդակը:	Խոցելի խմբերը նույնականացվել և գնահատվել են Բնապահպանական և սոցիալական (ԲԱՍ) գնահատման ընթացքում (ԲՍԱԳ, ՇԿՆՊ, ԿՊՎԾ), պետք է մշակվեն հատուկ կառավարման և մշտադիտարկման միջոցառումներ՝ հասցեական դարձնելու հայտնաբերված խոցելի կողմերը: Ծրագիրը նաև կտեղեկացնի և կխորհրդակցի շահագրգիռ կողմերի հետ, հատկապես կքննարկի խոցելի խմբերի կարիքները և կստեղծի բողոքարկման մեխանիզմ՝ հաշվի առնելով խոցելի անձանց կարիքները: Սույն ԿՊՎԾ-ն նաև հատուկ և հստակորեն դիտարկել է խոցելի խմբերի համար առաջարկվող Կենսագործունեության միջոցների վերականգնման միջոցառումների հասանելիությունը:
Բողոքների կառավարում և իրավական պաշտպանության միջոցներ	Ձեռքբերողներին և համապատասխան մարմիններին ուղղված դիմումներ, բողոքներ, առարկություններ և առաջարկություններ ներկայացնելը, ինչպես նաև դատարան բողոք ներկայացնելը ձեռքբերման գործընթացի յուրաքանչյուր փուլում: Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի դատարանների և պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ստանալու իրավունք:	Ծրագրերից պահանջվում է իրականացնել և հրապարակել բողոքարկման հասանելի, արդարացի և արդյունավետ մեխանիզմ ԾԱԱ-նց մտահոգությունները հասցեական դարձնելու համար: Բողոքարկման մեխանիզմը չի կանխարգելում իրավական պաշտպանության այլ միջոցների հասանելիությունը: Յուրաքանչյուր ծրագրի համար պետք է ստեղծվի բողոքների կարգավորման մեխանիզմ (ԲԿՄ): ԲԿՄ-ի մասին տեղեկատվությունը պետք է փոխանցվի ԾԱԱ-նց:	Ծրագիրը պետք է գործի դնի բողոքարկման մեխանիզմ՝ բոլոր շահագրգիռ կողմերի, ներառյալ ԾԱԱ-նց մտահոգությունները հասցեական դարձնելու համար: ԾԱԱ-ներից ստացվող բողոքները դասակարգվում և դրանց հետամուտ են լինում: Բողոքների արկղերը տեղադրվել են համայնքային գլխամասային գրասենյակներում: ԾԱԱ-նք խորհրդակցությունների ընթացքում տեղեկացվել են իրենց գտնվելու վայրի և բողոքի գրանցման գործընթացի մասին: ԲԿՄ-ն նաև ուրվագծվել է հրապարակված բոլոր նյութերում: ԾԱԱ-ները շարունակելու են տեղեկացվել բողոքարկման մեխանիզմների մասին:

Մշտադիտարկում	Ազգային օրենսդրությունը դրույթներ չի նախատեսում Կենսագործունեության միջոցների մշտադիտարկման և գնահատման կամ ավարտական արտաքին աուդիտի համար:	Պատվիրատուն կսահմանի ընթացակարգեր՝ վերահսկելու և գնահատելու ՎԳՊ-ի կամ ԿՊՎԾ-ի իրականացումը: Մշտադիտարկման ընթացքում ԾԱԱ-նց հետ կանցկացվի խորհրդակցություն: Վերաբնակեցման արդյունքների մշտադիտարկումը և գնահատումը, դրանց ազդեցությունը տեղահանված անձանց կենսամակարդակի վրա, և թե արդյոք վերաբնակեցման պլանի նպատակները ձեռք են բերվել, պետք է հաստատվեն արտաքին աուդիտի միջոցով, երբ վերաբնակեցման ազդեցու-թյունները զգալի են:	Սույն ԿՊՎԾ-ն սահմանում է ՀԿՑ-ներ մշտադիտարկման համար: Մշտադիտարկման գնահատումը և հաշվետվությունները կիրականացվեն ԲՍԿՀ-ի բոլոր բաղադրիչների համար, ներառյալ ԿՊՎԾ-ն: Սույն ծրագրի վրա հարկադրված վերաբնակեցման աննշան ազդեցության պատճառով ԿՊՎԾ-ի ավարտման որևէ հատուկ աուդիտ անհրաժեշտ չի համարվում: Վարկատուի ԲԱՍ մասով խորհրդականն ինքնուրույն կստուգի ԿՊՎԾ-ի իրականացումը:

4. Կարևոր տեղեկություններ Ծրագրի վերաբերյալ

4.1. Ծրագրի իրականացման վայրը

Առաջարկվող ՖՎ Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Արագածոտնի մարզում: Ծրագրի տարածքը տեղաբաշխված է Դաշտադեմ, Թալին, Աշնակ և Կաթնաղբյուր բնակավայրերի միջև: Վարչական տեսանկյունից տեղանքը գտնվում է Դաշտադեմ (նախկին) և Թալին համայնքների միջև ընկած տարածքում: Ներկայումս ամբողջ տարածքը հանդիսանում է միավորված Թալին համայնքի մաս, որն ընդգրկում է Թալինը, Դաշտադեմը, Աշնակը, Կաթնաղբյուրը և ավելի ընդարձակ տարածքում գտնվող այլ գյուղեր:

ՖՎ կայանը կունենա 200 ՄՎտ գործող հզորություն և կզբաղեցնի 525 հեկտար տարածք: Ծրագրի ամբողջ տեղանքը հանդիսացել է Դաշտադեմ ու Թալին բնակավայրերի համայնքային հողատարածք:

Դաշտադեմում (363,05 հեկտար) և Թալինում (156,31 հեկտար) տեղաբաշխված հողամասը համայնքից փոխանցվել է իշխանության կենտրոնական մարմիններին: Ստորև ներկայացված քարտեզում ցույց են տրված տեղանքի սահմանները, իսկ Քարտեզ 4 –ում՝ նախկինում Թալին և Դաշտադեմ բնակավայրերի համայնքային սեփականությունը հանդիսացած և իշխանության կենտրոնական մարմիններին փոխանցված ու ՖՎ Ծրագրին հատկացված հողատարածքը:

Քարտեզ 2. Ծրագրի իրականացման վայրը

Հրապարակման նպատակով PDF տարբերակում կավելացվի քարտեզ

4.2. Ծրագրի օբյեկտի բաղադրամասերը

Ակնկալվում է, որ ՖՎ կայանը կունենա 525 հեկտար տարածք ընդգրկող արևային վահանակների միջոցով էլեկտրաէներգիայի արտադրման 200 ՄՎտ հզորություն:

Ժամանակակից արևային կայանների հիմնական երեք բաղադրամասերն են՝

- Արևային ֆոտովոլտայիկ վահանակները (պանելները), որոնք կազմված են թափանցիկ ֆոտովոլտայիկ (ՖՎ) ապակուց, ինչպես նաև ՖՎ բջիջներից
- Կերպափոխիչից (ինվերտոր), որը հաստատուն հոսանքի էլեկտրաէներգիան փոխակերպում է փոփոխական հոսանքի (ՓՀ) էլեկտրաէներգիայի
- Տրանսֆորմատորից և ենթակայանից, ինչը հնարավոր է դարձնում ՖՎ կայանի միացումը ազգային էլեկտրական ցանցի հետ

Նշվածից բացի, կարևոր այլ բաղադրամասեր են հանդիսանում՝

- Մոտեցող ճանապարհները
- Կառավարման կենտրոնը
- Էլեկտրահաղորդման 300 մ երկարության փոխմիացումը ենթակայանից էլեկտրական ցանց
- Ժամանակավոր շինարարական ենթակառուցվածքը (միայն շինարարության փուլում)

ՖՎ վահանակները Ծրագրի օբյեկտի ենթակայանի հետ միացվելու նպատակով կօգտագործվեն մալուխային խրամուղիներ: Ենթակայանն ազգային էներգացանցին կմիանա 300 մ երկարությամբ էլեկտրահաղորդման օդային գծի (ԷՀՕԳ) միջոցով, միանալով տեղանքի մոտ գտնվող 220 կՎ ԷՀՕԳ -ին:

Կայանի ԲԼ ենթակայանի շինությունում կլինեն տարբեր տարրեր, ինչպիսիք են՝ տրանսֆորմատորը, բաշխիչ սարքվածքը, ՑԼ/ՄԼ փոխմիացումների սենյակը և այլն:

Դիտարկվել են տեղանքին մոտեցող մի քանի այլընտրանքային ճանապարհներ (ցույց են տրված ստորև): Առաջարկվող ճանապարհների երկարությունը կազմում է մոտ 2 կմ, որոնք կապահովեն տեղանքի հասանելիությունը աշխատողների, բեռնատարների, առաքումների (մատակարարումների) և այլ նպատակների համար: Տեղանքի հասանելիության ապահովման նպատակով դիտարկվող այլընտրանքային ճանապարհների առավելագույն մակերեսը կազմում է 1.6 հեկտար:

Ծրագրի բաղադրամասերի ավելի մանրամասն նկարագրությունը տրված է Բնապահպանական և Սոցիալական Ազդեցությունների Գնահատման (ԲՍԱԳ) հաշվետվությունում

Նկար 3. Ճանապարհի նախագիծը



Քարտեզ 3. Մոտեցող ճանապարհների տարբերակներ

Հրապարակման նպատակով PDF տարբերակում կավելացվի քարտեզ

Հրապարակման նպատակով PDF տարբերակում կավելացվի Է ՀՕԳ փոխմիացման քարտեզը

4.3. Ծրագրի տեղանքի նկարագրությունը

Ներցամաքային տեղադիրքի և լեռնաշղթաների առկայության պատճառով Հայաստանում կլիման մեծամասամբ չորային է: Ծրագրի տարածքի կլիմայական պայմաններն առաջացնում են հիմնականում շոգ ու չորային ամառներ և ցուրտ ձմեռներ՝ 3 ամիս տևող ձյան տեղումներով: Գերակշռող բնական միջավայրերը չոր տափաստաններն են՝ փոքր թփերով ու տարախոտային բուսականությամբ: Բուսականության աճը սահմանափակում են նաև սչ խորն ընկած ապարներն ու քարքարոտ հողը:

Կլիմայական պայմանները, ջրի սակավությունը և հողի ոչ բերրի հատկությունները սահմանափակում են Ծրագրի իրականացման տեղանքի և շրջակա տարածքների բուսականությունը, բնական կենսամիջավայրը և գյուղատնտեսական նպատակների համար օգտագործումը: Ներկայումս տարածքում ծառեր չկան, առկա են միայն փոքր թփեր ու տարախոտային բուսականություն: Տարածքի հողը չի մշակվում հողային ծածկույթի անբերրիության և ջրի բացակայության պատճառով: Տարածքն օգտագործվում է անասնապահական նպատակներով՝ որպես արոտավայր, սակայն ջրի բացակայությունը և աղքատ բուսածածկը սահմանափակում են դրա արտադրողականությունը:

Տարածքում չկան բնակելի շինություններ, կառույցներ կամ գյուղատնտեսական կառուցվածքներ: Տարածքի շրջակայքում գտնվող բոլոր բնակավայրերը (Թալինը, Դաշտադեմը, Կաթնաղբյուրը և Աշնակը) միմյանց հետ կապված են (տեղանքից դուրս գտնվող) տեղական ասֆալտապատ ճանապարհով՝ այնպես, որ տեղական համայնքների անդամներն անցնելու համար այդ տարածքը չեն օգտագործում տարածքի (տեղանքի) և գյուղերի միջև ռելիեֆի կտրտվածության, գետնից դուրս ցցված ապարների և համեմատաբար խորը որոշ կիրճերի պատճառով:

Ստորև ներկայացված են Ծրագրի իրականացման տեղանքի և շրջակա տարածքների պայմանները ցույց տվող նկարներ:

Ցուցապաստառ 7. Ծրագրի տեղանքը

Ծրագրի տեղանք - Լանդշաֆտ

Ծրագրի տեղանք – Լանդշաֆտ, ԷՀՕԳ -ը հետին պլանում

Ծրագրի տեղանք – Լանդշաֆտ, Արագածի լեռնաշղթան հետին պլանում

Ծրագրի տեղանք – Քարքարոտ բլրալանջեր

Ծրագրի տեղանք – Չորացած ժամանակավոր ջրահոսքի հետքեր, ԷՀՕԳ -ը հետին պլանում

Ցուցապաստառ 8. Ծրագրի տարածքը

Ծրագրի տարածք (տեղանքից դուրս) – Գյուղատնտեսական դաշտեր Աշնակ գյուղի մոտ

Ծրագրի տարածք (տեղանքից դուրս) – Արտեր Թալին տանող ճանապարհի մոտ

5 Հողերի ձեռքբերման գործընթաց

5.1. Հողերի ձեռքբերման վերաբերյալ ակնարկ

Ստորև տրված աղյուսակում ամփոփ ներկայացված են Ծրագրի տարբեր բաղադրիչների համար հողերի ձեռքբերման հիմնական գործընթացները:

Բաղադրիչը	Ազդեցության տարածքը	Հողի տեսակը / ձեռքբերումը	Բաժինը
Ծրագրի տեղանք	525 Հա	Կառավարության ղեկավարությամբ հողի փոխանցում իշխանության կենտրոնական մարմիններին և ԱՆԻՖ -ին ԷԳՊ տևողության ընթացքում Ծրագրին հատկացնելու նպատակով	5.2
		Համայնքային հողօգտագործում	5.3
Մոտեցող ճանապարհներ	Մինչև 1,6 Հա	Հնարավոր ազդեցություն մասնավոր վարելահողերի վրա (հյուսիսային կողմից մոտեցող երթուղու ԱՏՀ ուսումնասիրության համաձայն)	5.4
		Համայնքային հողօգտագործում մինչև 1,6 Հա)	5.3
Ժամանակավոր հողօգտագործում շինարարության նպատակներով	Չի ակնկալվում, իսկ եթե Գլխավոր Կապալառուն պահանջի, ապա միայն փոքր տարածքներ	Միայն վարձակալության պայմանագրի հիման վրա՝ վաճառողի և գնորդի փոխադարձ համաձայնությամբ	5.5

5.2. Ծրագրի տեղանքը

Ծրագրի նպատակով հողերի ձեռքբերումը կառավարության կողմից ղեկավարվող գործընթաց է: Ծրագրի տեղանքը հանդիսանում է հանրային հողատարածք: Այն պատկանում էր Թալին և Դաշտադեմ համայնքներին, փոխանցվելով Հայաստանի Հանրապետությանը: Այնուհետև Հայաստանի Հանրապետությունը հողամասերը հատկացրել է Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդին (ԱՆԻՖ), որը Ծրագիրն իրականացնող ընկերության բաժնետեր է: Ծրագրի օբյեկտը շահագործումից դուրս բերվելուց հետո այդ հողատարածքը կմնա որպես հանրային սեփականություն, և ակնկալվում է, որ այն կվերադարձվի համայնքներին:

Հողամասերը, որոնք նախկինում պատկանել են Դաշտադեմ ու Թալին համայնքներին, ցույց են տրված ստորև:

Ծրագրի իրականացման արդյունքում Թալին և Դաշտադեմ համայնքները Ծրագրից և կառավարությունից ստանում են երեք տեսակի ուղղակի օժանդակություն.

- 320 միլիոն ՀՀ դրամ նվիրաբերություն Ընկերությունից համայնքներին
- 1,000 միլիոն բյուջետային օժանդակություն իշխանության կենտրոնական մարմիններից համայնքներին: Դրան կարող է ավելանալ լրացուցիչ 1,000 միլիոն ՀՀ դրամ, քանի որ իշխանության կենտրոնական մարմինները համաֆինանսավորում են ամբողջ երկրով մեկ տեղական համայնքների կողմից ֆինանսավորվող և մշակվող սոցիալական ծրագրերի 50% -ը:

5.2.1. Ծրագիրն իրականացնող Ընկերության նվիրաբերությունը համայնքներին

Նախագահական հրամանագրի համաձայն պահանջվում է, որ կառավարության ղեկավարությամբ հողատարածքը հատկացնելուց հետո Ծրագիրն իրականացնող ընկերությունը Դաշտադեմ և Թալին համայնքներին նվիրաբերի 320,000,000 (երեք հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ:

2021թ. նոյեմբերին Ծրագրի կողմից 320,000,000 (երեք հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ է փոխանցվել Թալին և Դաշտադեմ համայնքներին: Հողատարածքի փոխանցումը համայնքներից կառավարությանը տեղի է ունեցել Դաշտադեմից՝ 18.06.2021թ., իսկ Թալինից՝ 02.03.2023թ. Ընթացքը Թալինում ձգձգվել է համայնքի միավորման գործընթացի և կրկին ընտրություններ անցկացնելու անհրաժեշտության պատճառով:

Քարտեզ 4. Ծրագրի տեղանքը, հողի նախկին սեփականատիրությունը



Հողատարածքի փոխանցման գործընթացն ընդհանուր առմամբ շարադրված է Կառավարության հետևյալ որոշումներում.

- 2021թ. հունիսի 18-ի N 1022-Ա Որոշումը (https://www.e-qov.am/qov-decrees/item/36428/) Ծրագրի շնորհման վերաբերյալ
- 2021թ. հունիսի 18-ի N 1021-Ա Որոշումը (https://www.e-qov.am/qov-decrees/item/36430/) և 2021թ. հոկտեմբերի 28 –ի N 1777 Որոշումը (https://www.e-qov.am/qov-decrees/item/37171/) Դաշտադեմի համայնքի հողամասերի փոխանցման վերաբերյալ
- 2023թ. մարտի 2 -ի N 274 Որոշումը (https://www.e-qov.am/qov-decrees/item/39943/) և 2023թ. հունիսի 8 -ի N 935 Որոշումը (https://www.e- qov.am/qov-decrees/item/40573/)

Ընկերության առաջարկած նվիրաբերության պայմանագիրը պետք է նվիրաբերվող միջոցների հատկացման նկատմամբ վերահսկողության որոշակի մակարդակ ապահովի, որպեսզի այդ միջոցները ծախսվեն զարգացման ծրագրերի վրա և այն գործունեությունների համար, որոնք օգուտ կբերեն համայնքների բնակչության մեծամասնությանը, ինչպես նաև համայնքների՝ խոցելիության չափորոշիչներին բավարարող անդամներին (օրինակ, որպեսզի համայնքի՝ խոցելի խմբերին պատկանող անդամները դժվարությունների չհանդիպեն նվիրաբերությամբ իրականացվող զարգացման միջոցառումներին հասանելիություն ունենալու առումով): Համայնքը ԱՆԻՖ -ի, Մասդարի և տեղական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված հանձնաժողովին տրամադրում է պլան, որտեղ մանրամասն ներկայացվում են միջոցների օգտագործումը: Ծրագրի համապատասխանությունը հաստատվելուց հետո բյուջեն կտրամադրվի համապատասխան կապալառուին կամ իրականացնող կողմին:

Համայնքն ընտրել է երկու՝ Դաշտադեմի ջրամատակարարման ենթակառուցվածքի կատարելագործման և Թալինի գերեզմանատան բարեկարգման ծրագրերը: Համարվել է, որ երկու ծրագրերն էլ օգուտ կբերեն ամբողջ համայնքին, ուստի երկուսն էլ հաստատվել են հանձնաժողովի կողմից:

Թալինի ջրամատակարարման ենթակառուցվածքի կատարելագործումը հատկապես օգտակար է, քանի որ տվյալ տարածքում գյուղատնտեսական գործունեության համար հիմնական խոչընդոտ է հանդիսանում ջրի սակավությունը, իսկ դեռ խորհրդային ժամանակաշրջանից մնացած ջրառոգման համակարգը տարիների հետ ավելի է քայքայվել: Խոցելի տնային տնտեսություններն ավելի մեծ կախվածություն ունեն գյուղատնտեսական գործունեությունից (մշակաբույսեր, պտղատու այգիներ, անասուններ), ինչի համար նպաստավոր է ջրի առկայությունը:

Թալինի հին գերեզմանատունը գտնվում է քաղաքի հյուսիս-արևմտյան մասում: 7-րդ դարից սկսած այն ծառայել է որպես դամբանատեղի, ունենալով ինչպես պատմական, այնպես էլ մշակութային կարևոր նշանակություն: Այնուամենայնիվ, ընդարձակման սահմանափակ հնարավորության պատճառով գերեզմանատունը հասել է փակման վիճակի, ինչն անհնար է դարձրել նոր հուղարկավորումները: Այդ պատճառով անհրաժեշտ է եղել նոր գերեզմանատուն կառուցել քաղաքի հարավ-արևելյան մասում: Այդ նոր գերեզմանատունը զբաղեցնում է ընդարձակ՝ 4,2 հեկտար տարածք և գրանցված է ՀՀ կադաստրի կոմիտեում: Թալինին հատկացված նվիրաբերության գումարն օգտագործվել է բարեկարգման այս նպատակով (ցույց է տրված ստորև):

Ցուցապաստառ 10. Գերեզմանատան բարեկարգում՝ Թալին

5.2.2. Կառավարության բյուջետային աջակցությունը համայնքներին

Ի հավելումն Ծրագիրն իրականացնող Ընկերության կողմից Թալին և Դաշտադեմ համայնքներին նվիրաբերվող 320 միլիոն ՀՀ դրամի, կառավարությունն ու համայնքը համաձայնել են, որ միավորված Թալին համայնքին (որտեղ ընդգրկված են Թալին քաղաքը, Դաշտադեմը, Աշնակը, Կաթնաղբյուրը և այլ գյուղեր) որպես բյուջետային աջակցություն լրացուցիչ տրամադրվի 1,000 միլիոն ՀՀ դրամ:

Բյուջետային այս աջակցությունը կարող է կրկնապատկվել, եթե ծառայեցվի զարգացման և սոցիալական ծրագրերի նպատակներին, քանի որ կառավարությունը փոխհատուցում է համայնքների տեղական իշխանության մարմինների ներդրումները, երբ դրանք ուղղված են լինում զարգացման և սոցիալական գործունեության ոլորտներին:

Կառավարության բյուջետային աջակցությունը կիատկացվի տեղական համայնքապետարանների կառավարման ստանդարտ գործընթացներին համապատասխան: Ընկերությունը չունի որևիցե իրավասություն այդ աջակցության նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն իրականացնելու համար:

5.3 Համայնքային հողի օգտագործում

5.3.1 Ծրագրի ազդեցությունը համայնքային հողի վրա

Դաշտադեմն ունի 2,102.49 հեկտար ընդհանուր արոտավայրային տարածք:

- 363,05 հեկտարը հատկացվել է շինհրապարակին
- 1,2 հեկտարը կարող է օգտագործվել շինհրապարակին մոտեցող ճանապարհի համար, եթե ընտրվի տեղանքին հյուսիս-արևմտյան կողմից հասանելիություն ապահովելու տարբերակը
- Ընդհանուր առմամբ, Ծրագրի հետևանքով տեղի կունենա արոտավայրերի ամբողջ տարածքի 17% -ի կորուստ
- Դաշտադեմի՝ համայնքի անդամներին հասանելի մնացած հողերը կկազմեն 1,739.44 հեկտար (83% -ը)

Թալինն ունի 2,444.68 հեկտար հանրային ընդհանուր արոտավայրային հողատարածք:

- Այդ հողատարածքից 56,36 հեկտարն հատկացվել է Ծրագրի տեղանքին
- Եթե ընտրվի տեղանքին կողմից հասանելիություն ապահովելու տարբերակը, լրացուցիչ կօգտագործվի ևս 1,6 հեկտար
- Ընդհանուր առմամբ, Ծրագրի հետևանքով տեղի կունենա արոտավայրերի ամբողջ տարածքի 6% -ի կորուստ
- Թալինի՝ համայնքի անդամներին հասանելի մնացած հողերը կազմում են 2,288.37 հեկտար (94% -ը մնում է)

Աշնակն ունի 1,335.33 հեկտար ընդհանուր արոտավայրային հողատարածք, որի վրա ազդեցություն չի լինի, եթե տեղանքին մոտեցող ճանապարհը Աշնակի կողմից չկառուցվի, ինչի հետևանքով կորուստը կկազմի 1 հեկտար, այսինքն ավելի պակաս, քան համայնքների արոտավայրերի 0,001% -ը:

Կաթնաղբյուրն ունի 1068,02 հեկտար ընդհանուր արոտավայրային հողատարածք, որի վրա Ծրագրի հետևանքով ազդեցություն չի լինի:

Ընդհանուր առմամբ, ազդեցություն կկրի շրջակա չորս համայնքների արոտավայրերի 7,5% -ը, իսկ 92,5% -ն ազդեցության չի ենթարկվի:

Քարտեզ 5. Կադաստրային քարտեզ, Թալին և Դաշտադեմ բնակավայրեր



5.3.2 Համայնքային հողօգտագործում

ԲՍԱԳ և ԿՊՎԾ պատրաստման ընթացքում համայնքների բնակչության հետ իրականացված խորհրդակցությունների, տնային տնտեսությունների սոցիալական հետազոտության, տեղում կատարած այցերի արդյունքում պարզվել է, որ ազդակիր համայնքների տարածքում գտնվող հանրային հողերը, այդ թվում՝ Ծրագրի տեղանքն օգտագործվում են մի շարք գործունեությունների համար, որոնք են՝ համատարած անասնապահությունը (հատկապես տարվա որոշ ամիսներին անասունների արածեցման), խոտաբույսերի, վայրի հատապտուղների և վառելափայտի հավաքման, ինչպես նաև որսորդության նպատակներով:

- Խոտաբույսերի, վայրի հատապտուղների և վառելափայտի հավաքում, որսորդություն

Խոտաբույսերի և վայրի հատապտուղների հավաքմամբ՝ ոչ հաճախակի, զբաղվում են սահմանափակ թվով տնային տնտեսություններ: Տնային տնտեսությունների համար այս գործունեությունը տնտեսական կարևորություն չի ներկայացնում և բացառապես օգտագործվում է ներքին սպառման նպատակով (խոտաբույսերի եփում, թեյերի և ջեմերի պատրաստում): Խոտաբույսերի հավաքման համար առկա են ընդարձակ տարածքներ, որոնց

հասանելիության համար խոչընդոտներ չկան, իսկ տեղանքը չունի խոտաբույսերի հավաքմանը նպաստող որևէ առանձնահատուկ հատկանիշ:

Հետազոտության հարցումներին պատասխանած տնային տնտեսությունների 2,5% -ը նշել են, որ վառելափայտ են հավաքում համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքներից, սակայն նման տարածքներ Ծրագրի տեղանքում չկան, քանի որ այդտեղ աճող բուսականության գերակշիռ մասը խոտազգիներ են:

Հասարակական կարծիքի հարցման ժամանակ մասնակիցներից մեկը նշել է, որ որսորդության նպատակով օգտվում է համայնքային հողից: Հարցվողը Թալին քաղաքից է եղել, նաև որպես լավ որսատեղի է բնորոշել Ծրագրի տեղանքից ավելի ընդարձակ տարածքը:

Տնային տնտեսությունների համար խոտաբույսերի, վայրի հատապտուղների, վառելափայտի հավաքումն ու որսորդությունը չի հանդիսանում կարևոր տնտեսական գործունեություն, կիրառվում է համայնքի միայն փոքրաթիվ անդամների կողմից, հողատարածքի առկայության առումով չի խոչընդոտվում, քանի որ դրանով կարելի է զբաղվել տեղական համայնքներին ավելի հասանելի տարածքներում, քան Ծրագրի տեղանքն է, նաև համանքի անդամները հաստատել են, որ Ծրագրի շինարարական աշխատանքների արդյունքում իրենք որևէ բացասական ազդեցություն չեն ակնկալում: Ուստի այս ազդեցությունը համարվում է աննշան:

- Անասնապահական գործունեություն

Համայնքները Ծրագրի տեղանքը և համայնքային այլ հողատարածքներն օգտագործել են հիմնականում անասունների արածեցման նպատակով: Պատմականորեն բազմաթիվ անգամ փորձ է կատարվել այդ տարածքներում աճեցնել գյուղատնտեսական մշակաբույսեր, ընդ որում վերջին անգամ խորհրդային տարիներին, սակայն բնահողի բերրիության ցածր մակարդակն ու ջրի սակավությունը հողամասը դարձնում է անարտադրողական, որը պիտանի է միայն համատարած անասնապահական գործունեության համար: Տարածքում գերակշռող տեսակներն են՝ տարախոտային բուսականությունը և փոքր թփերը, որոնք վատ են աճում խիստ կլիմայական պայմանների, հողային ծածկույթի անբերրիության և ընդարձակ անասնապահական գործունեության պատճառով:

Անասուններն ազատ արածում են՝ առանց անասնապահների կողմից կառուցվող արհեստական ցանկապատ տարածքներում սահմանափակման, չկան նաև կոնկրետ տնային տնտեսությունների համար հատկացված հատուկ արոտատեղիներ: Անասնապահները տեղյակ են Դաշտադեմին ու Թալինին պատկանող համայնքային հողատարածքներից և որպես կանոն, գերադասությունը տալիս են իրենց համայնքների տարածքում գտնվող հողամասերին, սակայն օգտվում են նաև այլ բաց արոտավայրերից: Աշնակից և Կաթնաղբյուրից որոշ անասնապահներ հաստատել են, որ օգտվում են նաև Ծրագրի տեղանքից, սակայն ավելի հազվադեպ, քան իրենց համայնքների հանրային հողատարածքից: Ավելի հեռու գտնվող համայնքների անասնապահները Ծրագրի տեղանքից չեն օգտվում, քանի որ այդտեղ արոտի որակը ցածր է, և իրենց ավելի հասանելի են նույն կամ ավելի բարձր որակի արոտավայրային տարածքներ:

Հայտնի դարձած այլ տեղեկությունների համաձայն՝ չորս համայնքներում կան թվով 541 անասնապահական ագարակատերեր, որոնք բոլորն էլ կարող էին հասանելիություն ունենալ հողամասին՝ որպես ամառային արոտատեղի: Այդ տնային տնտեսությունների մեծամասնությունը հիմնվում է անասուններին ամառվա ամիսներին արածեցնելու վրա, իսկ ձմռան ամիսներին պահում է անասնագոմերում, կերակրելով չոր խոտով:

Տեղանքն իր ցածր արտադրողականության պատճառով համայնքների կողմից այնքան հաճախ չի օգտագործվում, որքան մյուս արոտատեղիները, բացի դրանից, այդտեղ հասանելիության դժվարություններ կան գետնից դուրս ցցված ապարների և տվյալ վայրի և գյուղերի միջև ընկած

տարածքում համեմատաբար խորը որոշ կիրճերի առկայության հետ կապված:

Սոցիալական հետազոտության արդյունքներից պարզվել է, որ հարցված անասնապահական ագարակատերերի 83,3% -ն անասուններին արածեցնելու համար օգվում է իրենց տներից / ագարակներից դուրս գտնվող հողամասերից, որոնք բացառապես հանդիսանում են համայնքային հողատարածքներ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցված անասնապահների 80,0% -ն արածեցնելու նպատակով Ծրագրի տեղանքի հողատարածքն օգտագործում են համայնքային այլ արոտատեղիների հետ միասին: Հետագայում այս փաստը հաստատվել է ազդակիր բոլոր չորս համայնքների կողմից՝ շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացում:

Անասնապահական գործունեության համար հիմնական խոչընդոտները, որոնց մասին հիշատակվել է, անասնապահության տնտեսվարման խնդիրներն են (այն է՝ ձմեռային անասնակերի գինը, ջրի առկայությունը, շուկայի պայմանները), իսկ ամառային արոտատեղիների առկայության հարցն անասնապահության ընդարձակման համար հիմնական խոչընդոտ չի համարվել:

Ծանոթացման և ԲՍԱԳ նպատակով տեղանք կատարած այցերի և ԲՍԱԳ ուսումնասիրությունների ընթացքում (2021, 2022 և 2023) Ծրագրի տարածքում նկատվել է անասունների համատարած արածեցում, ինչով հաստատվել են հարցումների և խորհրդակցությունների ժամանակ ձեռք բերված տեղեկությունները: Ինչպես նշվել է ԿՊՎԾ ուսումնասիրություններում, դեպի տեղանք հետախուզական այցերի արդյունքում հաստատվել է, որ անասունների արածեցման դեպքերն առավել տեղի են ունենում համայնքներին մոտ տարածքներում, քան Ծրագրի տեղանքում:

Նկատի առնելով, որ Ծրագրի տեղանքում արոտավայրի առկայության հարցը հիմնական խոչընդոտ չի հանդիսանում անասնապահական տնտեսության վարման համար, և որ Ծրագրի ազդեցության հետևանքով տուժում է արոտավայրերի ընդհանուր տարածքի միայն համեմատաբար փոքր՝ ցածր արտադրողական ու դժվար հասանելի մասը, ակնկալվում է, որ Ծրագրի հետևանքով առաջացող տնտեսական տեղաշարժը կլինի աննշան Թալինի, Կաթնաղբյուրի և Աշնակի համար, և փոքր՝ Դաշտադեմի համար:

Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում ցուցաբերել կանխազգուշական մոտեցում, ուստի կմշակվեն ու կիրականացվեն Կենսագործունեության պայմանների վերականգնման միջոցառումներ ազդակիր չորս համայնքների անասնապահներին օգտակար լինելու համար, առանձնահատուկ ուշադրություն հատկացնելով Դաշտադեմին՝ հաշվի առնելով այն փաստը, որ Դաշտադեմի համայնքային հողերի ավելի մեծ մասն է ենթարկվելու Ծրագրի ազդեցությանը:

Նկատի առնելով, որ համայնքի անդամներն իրավունք ունեն օգտվել համայնքի հողերից, և որ տնային տնտեսությունների թվի մեծ մասն ունի անասունների փոքր գլխաքանակ, որոնց արածեցնում են տարբեր վայրերում, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններում և տարիներին, խորհուրդ է տրվում փոխհատուցման հարցի առնչությամբ ցուցաբերել ավելի շուտ համայնքային, քան անհատական կամ ընտանեկան (ըստ տնային տնտեսության) մոտեցում: Դա նշանակում է, որ համայնքների՝ անասուններ պահող անդամները իրավունք կունենան օգտվել ԿՊՎԾ միջոցառումներից՝ առանց ստիպված լինելու անհատապես ապացուցել, որ իրենց տնային տնտեսությունն օգտագործում էր Ծրագրի կողմից զբաղեցվող հողատարածքը:

5.3.3 Տեղանքին մոտեցող ճանապարհ

Ինչպես նկարագրված է 4.2 կետում, դիտարկվում են տեղանքին մոտեցող ճանապարհների երեք տարբերակներ: Դաշտադեմի և Աշնակի կողմից հասանելիություն ապահովելու դեպքում ազդեցության կենթարկվեն միայն համայնքային այն հողերը, որոնց օգտագործումը վերևում նկարագրվածներին (5.3.2) համանման է: Ինչպես նշվեց վերևում, առկա համայնքային հողատարածքների համեմատությամբ Ծրագրի տեղանքի հասանելիության ապահովման

համար անհրաժեշտ հողատարածքի մեծությունն աննշան է (<0,01%):

Տեղանքի հասանելիությունը հյուսիսից՝ Թալինի միջով ապահովելու դեպքում ճանապարհն առաջին 1 կիլոմետրը կանցնի գոյություն ունեցող ուղեգծով, որից հետո կհատի բաց համայնքային հողամասի մոտ 800 մետր տարածք: Գոյություն ունեցող սկզբնական 1 կմ ուղեգծին (արահետին) հարակից տնկված են մշակաբույսեր, որոնք հնարավոր է ազդեցության ենթարկվեն մոտեցող ճանապարհի լայնացման ժամանակ:

Ըստ գոյություն ունեցող ուղու լայնության ու ճամփեզրերի գնահատման արդյունքների և սալապատ / ցանքային տարածք ներխուժման ցածր մակարդակի (ցույց է տրված ստորև)՝ մոտեցող ճանապարհի լայնացման դեպքում մշակաբույսերի վրա ազդեցություններ չեն ակնկալվում: Այդուհանդերձ, մշակաբույսերը և արտը ներառվել են վճարման համար թույլատրվածների աղյուսակում՝ այն դեպքի համար, եթե ճանապարհի կառուցման ժամանակ պատահաբար տեղի ունենա ներխուժում և մշակաբույսերի վնասում:

Նկար 4.Հյուսիսային կողմից մոտեցող ճանապարհը



5.4 Հողօգտագործում այլ ժամանակավոր շինարարության համար

Ծրագրի նպատակով Ծրագիրն իրականացնող ընկերությունը լրացուցիչ հողատարածք ձեռք չի բերի:

Գլխավոր կապալառուին կամ ենթակապալառուներին կարող է անհրաժեշտ լինել շինարարության ընթացքում ժամանակավոր հողօգտագործման նպատակով ձեռք բերել հողատարածք: Այն կարող է օգտագործվել նաև ժամանակավոր պահեստարանի կամ աշխատողների բնակեցման նպատակներով, ինչը չափազանց անհավանական է համարվում, քանի որ բեռնաթափման ու պահպանման համար նախատեսվող բացօթյա տեղանքերը, բետոնաշաղախի պատրաստման ոչ ընդարձակ արտադրամասն ու շինարարության վարչակառավարման գրասենյակները տեղաբաշխված կլինեն շինհրապարակի տարածքում:

Այն դեպքում, եթե ժամանակավորապես ձեռք բերվի տեղանքից դուրս գտնվող հողատարածք,

դա տեղի կունենա միայն վարձակալության պայմանագրի հիման վրա՝ վաճառողի և գնորդի փոխադարձ համաձայնությամբ, իսկ օտարման տարբերակն անընդունելի է: Ընտրված տարածքում անհրաժեշտ ձևակերպումները չկատարած հողօգտագործողների վրա ազդեցությունները բացառելու նպատակով Գլխավոր կապալառուն կհետևի Ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի հողատարածք մուտքի ընթացակարգին:

6 Սոցիալ-տնտեսական պայմաններ

Հողօգտագործողների վերաբերյալ սոցիալ-տնտեսական տեղեկատվությունը ստացվել է համայնքների ղեկավարների հետ խորհրդակցությունների, համայնքի անդամների հետ խորհրդակցությունների և տնային տնտեսությունների հարցումների միջոցով, որոնք շարադրված են ստորև: Ստորև բերված տեղեկատվությունը կենտրոնանում է հողօգտագործողների վրա (օրինակ՝ որպես նմուշ ընտրված և հարցված տնային տնտեսությունները, ովքեր հաստատել են ծրագրի տարածքում համայնքային հողերի օգտագործումը): Ծրագրի տարածքի չորս համայնքների սոցիալական պայմանների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն տրված է ԲՍԱԳ-ում:

Հարցված ԾԱՏ-երի գյուղատնտեսական գործունեությունը

Արագածոտնի մարզի բնակչության մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, այդ թվում՝ հողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն օգտագործվում է որպես վարելահողեր և բազմամյա տնկադաշտեր, գյուղատնտեսությանը բաժին է ընկնում տարածքի համախառն արտադրանքի մեծ մասը: Արագածոտնը ապահովում է Հայաստանի տարեկան գյուղատնտեսական արտադրանքի 9,7%-ը, իսկ մարզի ընդհանուր տարածքի մոտ 79%-ը դասակարգվում է որպես վարելահող, որն ընդգրկում է մշակաբույսեր, պտղատու այգիներ և արոտավայրեր:

Տեղական իշխանությունների տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականին Թալին համայնքում գրանցվել է 1048, իսկ Դաշտադեմում՝ 1366 անասնագլուխ: Սա ցույց է տալիս, որ Դաշտադեմի նման փոքր գյուղական համայնքներն ավելի շատ են կախված անասնապահությունից՝ համեմատած Թալինի նման քաղաքների և վարչական կենտրոնների հետ:

Ազդակիր համայնքների տնային տնտեսությունների մեծամասնությունն ունի անասունների փոքրաթիվ գլխաքանակ: Ազդակիր համայնքներում 8 և ավելի անասուն ունեցող գյուղացիական տնտեսությունները քիչ են: Ազդակիր համայնքներում 8-ից ավելի անասուն ունեցող ագարակների ընդհանուր թիվը 36 է, ինչը կազմում է գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի մոտ 7%-ը, Դաշտադեմ համայնքում՝ 21, Թալինում 11, Աշնակում՝ 4, իսկ Կաթնաղբյուրում՝ ոչ մի հատ: Թալին և Դաշտադեմ համայնքներից ըստ տարիների գրանցված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2018 թվականից հետո աճել է:

ԲՍԱԳ սոցիալական թիմի կողմից հարցված 80 (45%) տնային տնտեսություններից 35-ը նշել են, որ ունեն անասուններ: Անասնապահ ագարակատերերի 82,3%-ը նշել է, որ ամառվա ամիսներին օգտագործում է համայնքային հողատարածքներ անասունների արածեցման համար: Սոցիալական հարցման հարցվածների այս ենթախումբը համարվում է Ծրագրի ազդակիր մարդկանց (ԾԱԱ) նմուշային խումբ:

Բոլոր 35 անասնապահ ագարակատերերը տարվա տարբեր ամիսներին իրենց անասունները պահում են մսուրքներում և բոլոր 35-ն էլ անասնակեր են օգտագործում այն ամիսներին, երբ անասունները պահվում են մսուրում:

Դաշտադեմի անասնատեր բոլոր 17 հարցված տնային տնտեսություններն օգտագործում են Ծրագրի հողատարածքն արածեցման համար: Նրանցից փոքր-ինչ հետ են մնում Թալինի անասնապահ ագարակատերերը, որտեղ եղած 7 անասնապահ ագարակատերերից 6-ը հայտարարել են, որ օգտագործում են Ծրագրի տարածքը անասունների արածեցման համար: Կաթնաղբյուրի բոլոր 3 անասնապահ ագարակատերերը նույնպես նշել են, որ օգտագործում

են Ծրագրի տարածքում գտնվող հողերը արածեցման համար, մինչդեռ Աշնակի 7 անասնապահ ագարակատերերից միայն 3 -ն են հայտնել Ծրագրի տարածքն անասունների արածեցման համար օգտագործելու մասին: Թալինի և Դաշտադեմի համայնքների ղեկավարների հետ հարցազրույցները ցույց են տվել, որ տուժած չորս համայնքների ագարակատերերն օգտագործում են Ծրագրի տարածքում և հարակից տարածքների հողերը հիմնականում ամռանը, երբ անասնակերի արտադրողականությունը շատ ցածր է: Հողամասի օգտագործումը բացառիկ չէ, և բոլոր ագարակատերերը տարբեր ժամանակաշրջաններում (գարուն, ամառ և աշուն) անասուններ են արածեցնում տարբեր համայնքային հողերում՝ սկսած առավել հասանելի վայրերից, որտեղ խոտո ավելի վաղ է հայտնվում, այնուհետև տեղափոխվելով ավելի ցածր արտադրողական հողատարածքներ, ինչպիսին նախագծի տարածքն է: Հասանելի արոտավայրերի քանակի շնորհիվ անասնապահների միջև հակասություններ չեն գրանցվել:

Սոցիալական ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հարցված անասնապահ ագարակատերերի 51,4%-ը վերջին մեկ տարում իր կովերից առնվազն մեկը վաճառել է: Հարցված անասնատերերին խնդրել են գնահատել իրենց անասնապահական գործունեության արտադրողականությունը: 60%-ը դասակարգել է իր անասնապահական ագարակատիրական եկամուտը որպես «բավարար», 34,2%-ը նշել է, որ ունի «չնչին» եկամուտ, մինչդեռ անասնապահ ֆերմերների 2,8%-ն իր անասունների եկամուտը դասակարգել է որպես «լավ»:

Ձմռան ամիսներին անասնակերի վրա ծախսվող գումարը տատանվում է 36000 ՀՀ դրամից մինչև 800000 ՀՀ դրամ հարցված մեկ տնային տնտեսության համար՝ կախված յուրաքանչյուր ագարակին պատկանող խոշոր եղջերավոր անասունների քանակից: Անասնապահ ագարակատերերի 97% -ը հաստատել է, որ խոշոր եղջերավոր անասունների և այլ անասունների պատվաստման համար օգտվում է անասնաբույժների ծառայություններից: Անասնաբուժական հաշիվները տատանվում են 1000 դրամից մինչև 40000 դրամ՝ կախված խոշոր եղջերավոր անասունների նախիրների չափերից: Ազդակիր համայնքների բազմաթիվ անասնապահ ագարակատերեր չեն օգտվում սպանդանոցներից, ԾԱՏ-երի (Ծրագրի ազդակիր տնտեսությունների) միայն 11,7% -ն է հայտնել, որ նախորդ տարի օգտվել է սպանդանոցի ծառայություններից:

Անասնապահությունը անասնաբուծական գործունեության գերակշռող ձևն է, որը գրանցվել է ազդակիր չորս համայնքներում: Այնուհանդերձ, ԾԱՏ -երը ներգրավված են նաև անասնաբուծական այլ տեսակի գործունեությունում, ինչպիսիք են օրինակ՝ թռչնաբուծությունը, այծաբուծությունը / ոչխարաբուծությունը և խոզաբուծությունը: Ազդակիր չորս համայնքների ԾԱՏ-երի 57%-ը նույնպես ընտանի թռչուններ են պահում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Դաշտադեմի 4 ԾԱՏ-երն ունեն այծեր/ոչխարներ, մինչդեռ Թալինի 2 տնային տնտեսություն և Աշնակի 2 տնային տնտեսություն ևս ունեն այծեր/ոչխարներ: Հարկ է նշել, որ անասնապահ ագարակատերերը, ովքեր նշել են, որ չեն օգտագործում Ծրագրի տարածքը որևէ գործունեության համար, խոշոր եղջերավոր անասուն չունեն:

Բացի անասնաբուծությունից, անասնապահ ագարակատերերի կողմից աճեցվող հիմնական պարենային մշակաբույսերը ներառում են մրգեր, ընկույզներ, գարի, բանջարեղեն և ցորեն: Ազդակիր համայնքներում արտադրվող ամենատարածված մշակաբույսերը մրգերն են, Թալինում հարցված ԾԱՏ-երի 50%-ը աճեցնում է մրգի որևէ տեսակ: Դաշտադեմում հարցված ԾԱՏ -երի 82%-ը զբաղվում է մրգերի աճեցմամբ: Կաթնաղբյուրում գտնվող բոլոր ԾԱՏ-երը և Աշնակում գտնվող ԾԱՏ-երի 85%-ը նույնպես մրգեր են աճեցնում: Տնկված ծառերից ստացված պտուղները հիմնականում ծիրաններ և խնձորներ են: Կան նաև տնային տնտեսություններ, որոնք ունեն կեռասի (բալի), սալորի, տանձի, դեղձի և սերկևիլի ծառերի տարբեր տեսակներ, ինչպես նաև խաղողի որթեր: Ընկույզները ևս մշակաբույսերի մշակման հանրաճանաչ տարբերակ են, որոնց աճեցմամբ ներգրավված են Դաշտադեմում ԾԱՏ-երի 29%-ը, Թալինում՝ 25%-ը, Կաթնաղբյուրում՝ 10%-ը, իսկ ԾԱՏ-երի 30%-ը՝ Աշնակում, ընդ որում ընկուզենիները

սովորաբար ամենատարածվածն են ազդակիր չորս համայնքներում: Սոցիալական հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մրգի և ընկույզի բերքի մի մասը վաճառվում է լրացուցիչ եկամուտ ստանալու նպատակով:

Գարու մշակությամբ զբաղվում է ընդհանուր հարցված անասնապահ ֆերմերների 32,3% -ը՝ այն դարձնելով ազդակիր համայնքների ագարակատերերի կողմից տնկված ամենահայտնի մշակաբույսը: Համայնքի անդամները, ովքեր ցորեն են մշակում, կազմում են Ծրագրի ազդակիր տնտեսությունների (ԾԱՏ-երի) հարցվածների 14,7%-ը, միայն երկու տնային տնտեսություններ են վաճառել իրենց ցորենի բերքը լրացուցիչ եկամուտ ստանալու համար, մինչդեռ մնացած երեք տնային տնտեսություններն իրենց բերքը պահել են անձնական օգտագործման համար: Դաշտադեմում և Կաթնաղբյուրում ԾԱՏ-երի կողմից աճեցվում է բանջարեղեն: Սոցիալական հետազոտության արդյունքներով պարզվել է, որ առվույտ աճեցնում է անասնապահ ագարակատերերի 20,5% -ը: Այս անասնապահ ագարակատերերի կողմից հավելյալ եկամուտ ստանալու նպատակով առվույտ չի վաճառվել, որոնք, ըստ տեղեկությունների, այն օգտագործում են որպես անասնակեր ձմռան ամիսներին, երբ խոշոր եղջերավոր անասունները պահվում են մսուրում:

Ինչպես ԾԱՏ ղեկավարների, այնպես էլ դրանց անդամների մեծ տոկոսը գյուղատնտեսության ոլորտում ներգրավված են զբաղվածության առաջնային կամ երկրորդային ձևերում: Թալինում կա 3 ԾԱՏ, որոնք ինքնազբաղված են գյուղատնտեսության մեջ, այս թիվը նմուշային չափի համար համեմատաբար ցածր է, սակայն սպասելի էր, քանի որ Դաշտադեմի, Կաթնաղբյուրի և Աշնակի հետ համեմատած՝ Թալինն ավելի «ուրբանիզացված» քաղաք է: Դաշտադեմում կա 12 ԾԱՏ, որտեղ տնային տնտեսության ղեկավարը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության առաջնային կամ երկրորդային ձևում: Աշնակում կա 3 ԾԱՏ, իսկ Կաթնաղբյուրում՝ 4 ԾԱՏ, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ որպես աշխատանքի առաջնային կամ երկրորդական ձև: Ինչ վերաբերում է սեզոնային աշխատանքին, տնային տնտեսությունների ղեկավարներն ավելի շատ ներգրավված են սեզոնային աշխատանքներում՝ համեմատած տնտեսության անդամների հետ:

Իրենց գյուղատնտեսական արտադրանքը վաճառող ԾԱՏ-երի մեծ մասը դա անում է տեղում: ԾԱՏ-երից միայն մեկն է նշել, որ ամիսը մեկ անգամ մասնավոր մեքենայով գնում է 5 կմ հեռավորության վրա գտնվող շուկա:

Սոցիալական հետազոտության ընթացքում գնահատվել է կոմունալ ծառայությունների հասանելիությունը, և դրա արդյունքները ցույց են տվել, որ բոլոր հետազոտված ԾԱՏ-երն իրենց տներում ունեն էլեկտրաէներգիայի հասանելիություն: ԾԱՏ -երի ջեռուցման աղբյուր են հանդիսացել գոմաղբը, փայտը և գազը: Թալինում, Դաշտադեմում, Աշնակում և Կաթնաղբյուրում գոմաղբը տների ջեռուցման համար էներգիայի ամենատարածված աղբյուրն է: Թալինում հարցված ԾԱՏ-երի 62,5% -ն ապավինում է գոմաղբին՝ որպես էներգիայի աղբյուր իրենց տները ջեռուցելու համար, Դաշտադեմի ԾԱՏ-երի 70,5% -ն օգտագործում է գոմաղբ, Աշնակի ԾԱՏ-երի 85%-ն է օգտագործում գոմաղբ, մինչդեռ իրենց տների ջեռուցման նպատակով Կաթնաղբյուրի տնային տնտեսությունների 66% -ն է գոմաղբ օգտագործում: Գոմաղբից հետո փայտը էներգիայի երկրորդ ամենատարածված աղբյուրն է ջեռուցման համար. Թալինում, Կաթնաղբյուրում և Աշնակում ԾԱՏ -երի 10%-ը ջեռուցվում է փայտով, մինչդեռ Դաշտադեմի ԾԱՏ-երի 11% -ն է օգտագործում փայտ: Գազը որպես ջեռուցման աղբյուր այնքան էլ տարածված չէ ԾԱՏ-երում, 4 ԾԱՏ-եր հայտնել են, որ գազի գները բարձր են, ինչով կարող է բացատրվել գոմաղբի մեծաքանակ օգտագործումը, քանի որ այն կարելի է հավաքել անասուններից կամ ձեռքբերել ավելի էժան գնով: Գազը ԾԱՏ-երը օգտագործում են միայն Թալինում (25%) և Դաշտադեմում (17%), իսկ Աշնակի և Կաթնաղբյուրի ոչ մի հարցված ԾԱՏ չի հայտնել, որ գազ է օգտագործել՝ որպես տունը ջեռուցելու միջոց (սակայն պետք է նշել, որ նմուշային չափը Աշնակում և Կաթնաղբյուրում ավելի փոքր էր):

Հարկ է նշել, որ բոլոր ազդակիր համայնքներում հարցված տնային տնտեսությունները, որոնք

ԾԱՏ չեն հանդիսանում (այսինքն՝ որոնք չունեն անասուններ կամ չեն հայտնել, որ օգտագործում են ծրագրի տարածքը), ցույց են տալիս, որ ջեռուցման համար ավելի մեծ կախվածություն ունեն գազից, քան հարցված ԾԱՏ -երը:

Սանիտարահիգիենիկ միջոցների ուսումնասիրման արդյունքներից պարզվել է, որ ԾԱՏ-երը օգտագործել են կոյուղու համակարգին միացված զուգարաններ, կոյուղու հոր, բացօթյա զուգարան կամ թույլ են տվել, որ իրենց կոյուղաջրերը հոսեն մոտակա հովիտ: Թալինում ԾԱՏ-երի մեծ մասը (75%) ուներ զուգարան, որը միացված էր կոյուղու համակարգին, իսկ մնացած 25%-ն ուներ զուգարան, բայց թողել են, որ կոյուղաջրերը հոսեն մոտակա հովիտ: Դաշտադեմում, Աշնակում և Կաթնաղբյուրում համայնքային կոյուղու համակարգ չկա: Դաշտադեմի ԾԱՏ-երի մեծամասնությունը (82%) ունի զուգարան կեղտաջրերի հորով, ԾԱՏ-երի 11% -ն ունի բացօթյա զուգարաններ և 5% -ն ունի զուգարաններ, որտեղից կեղտաջրերը հոսում են մոտակա հովիտ: Նմանապես, Աշնակում ԾԱՏ-երի 85%-ն ունի կեղտաջրերի հորերով զուգարաններ, իսկ 14%-ը թույլ է տալիս, որ իր կեղտաջրերը հոսեն մոտակա հովիտ: Կաթնաղբյուրում ԾԱՏ-երի 66% -ը օգտվում է կեղտաջրերի հորերից կոյուղու ենթակառուցվածքի բացակայության պատճառով, իսկ 1 ԾԱԱ օգտվում է բացօթյա զուգարանից: Վերոնշյալ սանիտարահիգիենիկ միջոցների տեսակին առնչվող միտումը նկատվել է նաև ԾԱԱ չհանդիսացող հարցվածներին վերլուծելիս:

Ինչ վերաբերում է սեփականություն հանդիսացող ապրանքներին, ապա ավտոմեքենա ունենալը տարածված բնույթ ունի հարցված բոլոր ԾԱՏ-երի շրջանում: Դաշտադեմում հարցված ԾԱՏ -երի 82% -ն ունի ավտոմեքենա, Աշնակում՝ 71% -ը, իսկ Կաթնաղբյուրում՝ 66% -ը: Թալինում ավտոմեքենա ունեցող ԾԱՏ-երի քանակի մեջ նկատելի տարբերություն կար ԾԱՏ չհանդիսացողների թվի համեմատ, Թալինում մեքենաներ ունեն ԾԱՏ-երի միայն 50% -ը, մինչդեռ ԾԱՏ չհանդիսացողների 64%-ն ունի ավտոմեքենա:

Հարցված 35 ԾԱԱ-ներից 17-ը նշել են, որ կցանկանային աշխատել ՖՎ կայանում շինարարության փուլում, ընդ որում հարցվողները հիմնականում տղամարդիկ էին: Զբաղմունքները նշված են՝ վարորդ, շինարար, պահակ, եռակցող, տեխնիկ և էլեկտրագետ: Հավանական է, որ ԾԱՏ-երի շրջանակում տնային տնտեսությունների չհարցված անդամներ նույնպես կարող են հետաքրքրված լինել աշխատանքով:

Խոցելիություն

Սոցիալական հետազոտությամբ հայտնաբերվել են մի շարք խոցելի ԾԱՏ -եր, ինչի հետ կապված պետք է առանձնահատուկ ուշադրություն հատկացնել խոցելի անձանց ու խմբերի կարիքներին:

Հետազոտված ԾԱՏ -երի 9 ղեկավար կա, ովքեր 60 տարեկանից բարձր են: Այնուամենայնիվ, հարցված ԾԱՏ-երում կենսաթոշակ ստանալուն հավակնող միայն 5 անձ կա:

Սոցիալական հետազոտության արդյունքները բացահայտել են, որ առկա է երկու ԾԱՏ, որոնք ղեկավարվում են կանանց կողմից, և այդ երկու կանայք էլ այրի են: Այրիները և՛ ինքնազբաղված են գյուղատնտեսության մեջ, և՛ ներգրավված են անասնաբուծության մեջ՝ որպես հիմնական զբաղվածություն:

Օրենսդրության համաձայն նվազագույն աշխատավարձը Հայաստանում կազմում է ամսական 68000 ՀՀ դրամ: Սոցիալական հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Թալինում ԾԱՏ-երն ունեն տնային տնտեսությունների ընդհանուր եկամուտ 78000-92000 ՀՀ դրամի սահմաններում: Հարկ է նշել, որ 8 ԾԱՏ-ից միայն 2-ն էին իրենց հարմարավետ զգացել՝ բացահայտելով իրենց տնային տնտեսությունների ընդհանուր եկամուտը: Դաշտադեմ համայնքում տնային տնտեսությունների հայտարարագրված ընդհանուր եկամուտները տատանվում են 131000-457000 ՀՀ դրամի սահմաններում: Աշնակում ԾԱՏ-երը բացահայտել են, որ տնային տնտեսության ընդհանուր եկամուտը տատանվում է 83000-300000 ՀՀ դրամի սահմաններում: Կաթնաղբյուրը գրանցել է տնային տնտեսությունների ամենաբարձր

եկամուտը հարցված ԾԱՏ-երում, որոնց եկամուտները տատանվում են 104500 դրամից մինչև 787000 դրամի սահմաններում:

ԾԱՏ -երից մի շարք տնային տնտեսություններ բացահայտեցին, որ ունեն ֆինանսական պարտքեր: Դաշտադեմը գրանցված ամենաշատ ֆինանսական պարտք ունեցող համայնքն է, որտեղ ԾԱՏ-երի 24% -ն ունի որոշակի ֆինանսական պարտք: Թալինում հայտնել են, որ ԾԱՏ-երի 14,2% -ը պարտքեր ունի: Աշնակում և Կաթնաղբյուրում՝ երկուսում էլ կան ԾԱՏ -եր, որոնց 10% -ը պարտքերի տակ է, որոնք պայքարում են ամսական ծախսերը հոգալու համար և կախում ունեն արտերկրում գտնվող իրենց ընտանիքների անդամների կողմից ուղարկվող գումարից: Հետևաբար, սոցիալական հետազոտության ընթացքում հավաքագրված տնային տնտեսությունների եկամուտների ինքնահոչակ տվյալների հիման վրա ենթադրվում է, որ ազդակիր համայնքների տնային տնտեսությունների մեծամասնությունն ապրում է աղքատության շեմից ցածր մակարդակում:

Հարցված բոլոր ԾԱՏ -երը նշել են, որ առողջապահական հիմնարկներին հասանելիություն ունեն, ընդ որում տնային տնտեսությունների մեծ մասն օգտվում է Թալինի բժշկական կենտրոնից կամ Երևանի բժշկական հաստատություններից: Կրթության մակարդակը Հայաստանում գերազանց է, Հայաստանում 15 տարեկան և բարձր տարիքի բնակչության 100% -ը գրագետ է, ինչի շնորհիվ Հայաստանը կրթության և գրագիտության հասանելիության առումով աշխարհում դասվում է համարյա 99 տոկոսանոց մակարդակին: Հարցմանը մասնակցած ԾԱԱ բոլոր հարցվողներն ունեն միջնակարգ, բարձրագույն կամ մասնագիտական կրթություն, հետևաբար անգրագիտությունը չի համարվում համապատասխան խոցելիության չափորոշիչ:

Սոցիալական հետազոտությամբ բացահայտվել է ինը ԾԱՏ, որտեղ ընտանիքում կա հաշմանդամություն ունեցող անձ: Հայաստանում հաշմանդամությունը դասվում է որպես 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի, ընդ որում ԾԱՏ-երի մեծամասնությունն իրենց տնտեսությունների կազմում ունեն 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ: Հարկ է նշել, որ հայտնաբերված հաշմանդամներից մեկը տնային տնտեսությունը ղեկավարող 60-ն անց կին է: Ընդհանուր առմամբ, ընտանիքում հաշմանդամ ունեցող 9 ԾԱՏ -երից 6-ը 60-ն անց են: Կան 11 ԾԱՏ-եր, որոնք ընտանիքում ունեն քրոնիկական հիվանդությամբ տառապող անդամ: Նկարագրված քրոնիկական հիվանդություններն են՝ հիպերտոնիան (զարկերակային բարձր ճնշումը), շաքարախտը, սրտանոթային հիվանդությունները:

Հաշմանդամության կամ խրոնիկական հիվանդությունների պատճառով շատ ընտանիքներ բուժում ստանալու համար ամսական վճարում են 25000 դրամից մինչև 500000 ՀՀ դրամ:

Փախստականներ պատերազմական գործողությունների պատճառով կամ անգրագետ անձինք ԾԱՏ-երում չեն եղել:

7 Քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ

Ծրագրի ԲՍԱԳ –ը ներառում է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇԿՆՊ), որտեղ բացահայտվում են ներգործության ենթարկվող շահագրգիր կողմերը, փաստաթղթային հիմնավորումներ են տրվում փոխգործակցման միջոցառումներին և սահմանվում են շահագրգիռ կողմերի ներգրավման պահանջները Ծրագրի օբյեկտի կառուցման նպատակով: ՇԿՆՊ –ում նաև որոշվում են խոցելիության չափանիշները և շարադրվում են մեղմացման միջոցառումները խոցելի խմբերի կառուցողական մասնակցության նպատակով:

ՇԿՆՊ-ում գնահատվում են ԲևՍ ուսումնասիրությունների ժամանակ օգտագործված՝ շահագրգիռ կողմերի ներգրավման գործիքները, նկարագրվում են հրապարակման ու ներգրավման յուրաքանչյուր մեթոդի ուժեղ և թերի կողմերն ու հիմնավորվում են խորհրդատվության ընտրված գործիքներն այս ծրագրի համար: ՇԿՆՊ-ում ներառվում են նաև քննարկումներ խոցելիության չափանիշների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես են դրանց նկատի առնվել Ծրագրի նպատակով շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը նախագծելիս: Երկու վերլուծություններն էլ հետաքրքրություն են ներկայացնում Ծրագրի ազդակիր անձանց ներգրավման տեսանկյունից:

ԿՊՎԾ -ի սույն բաժնում ընդհանուր գծերով շարադրվում են ԾԱԱ –նց հետ առարկայական խորհրդակցությունները՝ հատկապես քննարկումները Ծրագրի տարածքում (որոնք վերաբերում են Ծրագրի տեղանքում հողի օտարմանը, մոտեցող ճանապարհներին և համայնքային հողօգտագործմանը, ինչպես նկարագրվեց նախորդ բաժնում).

Հողի օտարման և Կենսագործունեության միջոցների վերականգնման վերաբերյալ առանցքային խորհրդակցական քննարկումներն ամփոփ տրված են ստորև:

Աղյուսակ 1. Շահագրգիռ կողմերի ներգրավման հիմնական միջոցառումները

Ամսաթիվ	Միջոցառում	Համապատասխանություն ԿՊՎԾ -ին	Օգտագործված նյութեր
18 - 26 օգոստոսի, 2021թ.	Ներգրավում՝ համայնքների ղեկավարներ	Քննարկում հողահատկացման և համայնքային հողի օգտագործման վերաբերյալ: Տեղեկատվության հավա-քագրում տվյալ շրջանում անասնա-պահության վարման վերաբեր-յալ: Բողոքների և առաջարկությունների արկղերի տեղադր-ման հետ կապված քննարկում:	Ծրագրի քարտեզներ
30 նոյեմբերի, 2021թ.	Բողոքների արկղերի տեղադրում	Ծրագրի շրջանակում բողոքարկման մեխանիզմի ստեղծում, այդ թվում՝ բողոքների արկղերի տեղադրում և կոնտակտային տվյալների տրամադրում	Բողոքների արկղեր և պաստառներ
9 նոյեմբերի, 2021թ.	1-ին հասարակական լսումներ	Քննարկումներ մասնակիցների հետ՝ հողի հատկացման, հողօգտագործման և դրանց հրատապության վերաբերյալ	Շրջանակների որոշման բրուշյուր (ՀՈՒՆ ՈՏԱ-ի համար)

1 հուլիսի, 2022թ.	2-րդ հասարակական լսումներ	Քննարկումներ մասնակիցների հետ՝ հողօգտագործման հրատապության վերաբերյալ: Տեղեկատվություն տնային տնտեսությունների ուսումնասիրության վերաբերյալ	Շրջանակների որոշման բրուշյուր (ՀՈՒ-ն ՈՏԱ-ի համար)
20 և 22 դեկտեմբերի, 2022թ.	3-րդ հասարակական լսումներ	Քննարկումներ հողօգտագործման կարևորության գնահատման վերաբերյալ (անասնապահությունն այլ նպատակ-ներով օգտագործման համեմատությամբ): Քննարկում անասնապահներին ԿՊՎԾ շրջանակում հնարավոր փոխհատուցման վերաբերյալ:	Պրեզենտացիոն նյութ, ԲՍԱԳ բրոշյուր (ԲՍԱԳ-ի ՈՏԱ)
12 ապրիլի, 2023թ.	4-րդ հասարակական լսումներ	Լրացուցիչ քննարկում անասնապահ-ներին ԿՊՎԾ շրջանակում փոխհատուց-մանվերաբերյալ	Պրեզենտացիոն նյութ, ԲՍԱԳ բրոշյուր (ԲՍԱԳ-ի ՈՏԱ)
4 հուլիսի, 2023թ.	5-րդ հասարակական լսումներ	Վարկատուների ԲՍՀՍ նպատակով համայնքային հանդիպում: Հողի ձեռքբերման (օտարման) գործընթացի և Կենսագործունեության միջոցների վրա ազդեցությունների ստուգում (հսկում), կենսամիջոցների փոխհատուցման գերադասելի տարբերակների քննարկում	

Ծրագրի տարածքում իրականացված քննարկումների ընթացքում լայնորեն տարածվել է համապատասխան տեղեկատվություն: ԲՍԱԳ շրջանակների որոշման փուլում՝ 2021 և 2022 թվականներին իրականացվել է շահագրգիռ կողմերի նույնականացում, տեղեկությունների հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավում: Մինչ օրս իրականացվել են թվով հինգ բաց հանրային քննարկումներ և մի շարք դեմ-առ-դեմ հանդիպումներ են կազմակերպվել հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ ԲԵՍ ուսումնասիրության պատրաստման ժամանակ:

Որոշ հանրային հանդիպումներ իրականացվել են ազդակիր չորս համայնքներից յուրաքանչյուրում՝ առանձին-առանձին, իսկ որոշ քննարկումներ կազմակերպվել են Թալինի հանդիսադահլիճում, ապահովելով տրանսպորտ դրա պահանջն ունեցող (հաշմանդամության, հասարակական տրանսպորտի բացակայության կամ ֆինանսական նկատառումների պատճառով) ցանկացած մասնակցի համար:

Հանրային բոլոր հանդիպումների մասին հրապարակայնորեն ծանուցվել է պաստառների միջոցով և համայնքների ֆեյսբուքյան խմբերում (որոնք բավականին ակտիվ են), ծանուցելիս բավականաչափ ժամանակ տրամադրելով կենդանի խոսքին տարածվելու և տեղ հասնելու հնարավորություն տալու համար:

Նկատի առնելով, որ Թալինի և Դաշտադեմի համայնքների բոլոր անդամներն իրավունք ունեն օգտվել բաց համայնքային հողերից, և որ Աշնակում ու Կաթնաղբյուրում իրականացված հետազոտությամբ հաստատվել են այդ համայնքների տարածքում ընկած հողամասերի որոշակի մակարդակով ապօրինի օգտագործման փաստերը, որոշվել է չսահմանափակել անասնապահների (որոնք կոնկրետ որոշված կամ թվարկված չեն) ԿՊՎԾ վերաբերյալ քննարկումներն ու բաց համայնքային հանդիպումների միջոցով այդ քննարկումներում ներգրավել համայնքների բոլոր անդամներին:

Տեղական իշխանությունների խորհրդով, քանի որ անասնապահների կազմակերպված որևիցե խումբ կամ որևէ տեսակի պաշտոնական կամ ոչ պաշտոնական ներկայացուցիչ առկա չէ, միայն անասնապահների համար առանձին հանդիպման կազմակերպում գործնականում

իրականացնել հնարավոր չէ:

Համայնքային հանդիպումների ընթացքում առաջարկվել է կազմակերպել անասնապահների և կանանց թիրախային խմբեր: Ծրագրի ազդակիր որոշ համայնքների (օրինակ՝ Դաշտադեմի) կանայք համաձայնել են ունենալ առանձին թիրախային խմբեր, սակայն անասնապահները հետևողականորեն շեշտել են, որ իրենք տեսակետներն ու մտահոգություններն արտահայտում են բաց համայնքային հանդիպումների ժամանակ և նշել են, որ առանձին թիրախային խմբերի կարիք չունեն:

Հանրային քննարկումների ժամանակ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով մասնակիցներին բաժանվել են Ծրագրի հիմնական բնութագրերի, այդ թվում՝ Ծրագրի անվանման, տեղանքի գտնվելու վայրի, աշխատանքների շրջանակի, հողի վրա ազդեցությունների, հողօգտագործման, կենսամիջոցների հնարավոր վերականգնման և այլ տեսակի տեղեկություններ ներկայացնող բրուշյուրներ, ինչպես նաև PowerPoint -ով ցուցադրվել է շնորհանդես: Այդ քննարկումների արդյունքները մանրամասն շարադրված են ՇԿՆՊ –ում:

2021 թվականին անցկացվել են երկու դեմ-առ-դեմ հանդիպումներ, մեկը Դաշտադեմ համայնքի ղեկավարի հետ՝ 2021թ. օգոստոսի 18-ին, իսկ մյուսը Թալին համայնքի ղեկավարի հետ՝ 2021թ. օգոստոսի 28-ին: Երկու համայնքների ղեկավարները նշել են, որ Ծրագրի տարածքն օգտագործվել է որպես արոտավայր ամռանը և աշնանը, տարածքի հողերն անմշակ են, իսկ համայնքային հողերի այլ օգտագործումն այդ տեղանքի հետ չի առնչվում:

Շրջանակների որոշման նպատակով առաջին հանրային քննարկումն անցկացվել է Թալին համայնքում 2021թ. դեկտեմբերի 9-ին: Քննարկումն ընդգրկել է Ծրագրի հետևանքով հնարավոր վերաբնակեցման ազդեցությունների նկարագրությունը, այդ թվում՝ ՖՎ վահանակների տարածքի ցանկապատումը և անասնապահական և այլ գործունեությամբ զբաղվողների համար տեղանքի հասանելիության բացառումը: Համայներից նշել են, որ իրենք տեղյակ են ցանկապատումից, քանի որ այդ համայնքներում առկա են ևս երկու ՖՎ ծրագրեր:

Շրջանակների որոշման նպատակով երկրորդ՝ 2022թ. հուլիսի 1-ի հանրային քննարկմանը, բացի տեղական իշխանության և տեղական համայնքների անդամներից, մասնակցել է նաև ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ «ՊՈԱԿ») ներկայացուցիչը: Երբ քննարկումը կենտրոնացել է համայնքային արոտավայրերից տնտեսական տեղաշարժի հարցի վրա, տեղաբնակները հարցրել են, թե այս գործունեության համար Թալինի և Դաշտադեմի վարչական շրջանից որքան հողատարածք է նախատեսվում հատկացնել: Խորհրդականները մանրամասներ են տրամադրել, այնուհետև քննարկման ընթացքում մասնակիցներից ոմանք, ովքեր անասնապահներ են եղել, շեշտել են, որ այդ տարածքի օգտագործումը ՖՎ համար բացասական ազդեցություն կունենա արոտային անասնապահության վրա, քանի որ դրանք օգտագործվում են որպես արոտավայրեր: Անասնապահներին տեղեկացրել են, որ մշակվում է Կենսագործունեության վերականգնման պլան, որը կապահովի փոխհատուցման միջոցների տրամադրում Ծրագրի տեղանքի պատճառով հողատարածքի կորստի դիմաց, նշելով համայնքին աջակցելու նպատակով Կենսագործունեության միջոցների վերականգնման հնարավոր միջոցառումների ցանկը:

Հասարակական լսումների երրորդ փուլը՝ ԲՍԱԳ նախագծի ավարտից հետո, անցկացվել է 2022թ. դեկտեմբերի 20-ին: Անցկացվել են թվով չորս առանձին հանրային քննարկումներ՝ մեկական յուրաքանչյուր համայնքում: Համայնքի մասնակից անդամներից մեկը նշել է, որ Ծրագրի կողմից զբաղեցվելիք տարածքն օգտագործվում է որպես արոտատեղի, և որ իր կարծիքով նպատակահարմար չէ այդտեղ կառուցել արևային կայան: Առաջարկել է կառուցել այն մեկ այլ վայրում: Մասնակիցներին խորհրդատվություն են տրամադրել Կենսագործունեության վերականգնման դիտարկվող միջոցառումների մասին, որը կարող է ընդգրկել դասընթացների կազմակերպում անասնապահության և անասնաբուծության

տնտեսությունների կատարելագործված կառավարման նպատակով, պատվաստանյութերի կամ ձմռան ամիսներին տեղանքի արտադրողականությանը համարժեք չափով անասնակերի տրամադրում: Ընդհանուր գծերով նկարագրվել է ԿՊՎԾ բյուջեի հաշվարկման մեթոդաբանությունը: Մասնակիցներին հնարավորություն է տրվել արտահայտել իրենց կարծիքը: Տեղական համայնքների ներկայացուցիչները բողոքներ են հնչեցրել համայնքներին տրամադրվող նվիրատվության գումարի չափի վերաբերյալ, և նշել, որ համայնքները ցանկանում են ստանալ լրացուցիչ օժանդակություն: Խորհրդականներն ընդգծել են, որ հողատարածքը փոխանցվել է կառավարության ղեկավարության ներքո, և որ իրենք համայնքի արձագանքի մասին կհայտնեն կառավարությանն՝ ի գիտություն: Կենսագործունեության վերականգնման առաջարկվող միջոցառումների առնչությամբ տեղական ներկայացուցիչները նշել են, որ իրենց կարծիքով, առաջարկվող այդ միջոցառումները շատ սահմանափակ օգուտ կբերեն համայնքներին, և առաջարկել են վերոնշյալ միջոցառումների փոխարեն քննարկել ու մշակել այլ տարբերակներ: Նրանց պատասխան արձագանքը գրանցվել է և խորհրդականները հետամուտ լինելով հարցին, հաջորդ ամիսների ընթացքում աշխատել են տեղի համայնքապետարանի հետ հնարավոր տարբերակների ավելի լայն շրջանակներ մշակելու նպատակով, որոնք կարող են օգուտ բերել անասնապահներին և գյուղատնտեսական գործունեությունից կախման մեջ գտնվող տնային տնտեսություններին:

Տեղական համայնքներին հայտնի է, որ Ծրագրի տարածքի տեղաբաշխման հետևանքով և զգայուն ընկալիչներից (ինչպիսիք տնային տնտեսություններն են) դրա հեռավորության շնորհիվ ֆիզիկական տեղաշարժ կամ վերաբնակեցում տեղի չի ունենալու: Համայնքների անդամները տեղյակ են, որ Ծրագիրն անասնապահների համար կառաջացնի տնտեսական դրության փոքր տեղաշարժ, և որ հանրային քննարկումների ընթացքում իրենց արտահայտած կարծիքներին համապատասխան փոխհատուցման միջոցառումները գտնվում են նախագծման (մշակման) փուլում:

Նախքան հասարակական լսումների չորրորդ փուլը, կենտրոնական (պետական) և տեղական ինքնակառավարման մարմինները զբաղվել են եղել հողատարածքի փոխանցման հարցի քննարկմամբ: Ծրագիրը ներառված չի եղել քննարկումներում, քանի որ սա կառավարության կողմից ղեկավարվող հողի ձեռքբերման (օտարման) գործընթաց է, ինչպես նկարագրված է սույն փաստաթղթի նախորդ բաժիններում: Արդյունքում որոշում է կայացվել այն մասին, որ կառավարությունը՝ որպես բյուջետային աջակցություն, համայնքներին կտրամադրի լրացուցիչ 1,000 միլիոն ՀՀ դրամ:

Հասարակական լսումների չորրորդ փուլը տեղի է ունեցել Թալին (ներառյալ՝ Աշնակ և Կաթնաղբյուր) և Դաշտադեմ համայնքներում 2023թ. ապրիլի 12-ին: Համայնքին ներկայացվել են Կենսագործունեության վերականգնման ավելի մեծ թվով հնարավոր միջոցառումներ: Համայնքը նշել է, որ կառավարության հետ պայմանագիր կնքելուց հետո, որի մասին ընդգծվեց նախորդ պարբերությունում, իրենք բավարարված են Ծրագրի և հողի օտարման գործընթացի առնչությամբ, նկատի առնելով դրա զգալի դրական ազդեցությունը: Ընդգծվել է, որ առկա է այլընտրանքային արոտատեղի, իսկ Ծրագրի հողատարածքի արտադրողականությունը սահմանափակ է: Մասնակիցները համաձայնել են, որ իրականացվեն հետագա քննարկումներ, և ԿՊՎԾ բյուջեին համապատասխան ԿՊՎԾ գերադասելի փաթեթը փոխանցվի խորհրդատուներին: Հետագայում համայնքների ներկայացուցիչները նշել են, որ կենսամիջոցների վերականգնման գերադասելի է միջոցառում է կաթի վերամշակման գործարանը:

Հասարակական հինգերորդ լսումներն իրականացվել են որպես Վարկատուների բնապահպանական ու սոցիալական համալիր ստուգումների (ԲՍՀՍ) մի մաս: Համայնքների ներկայացուցիչները տրամադրել են ուսումնասիրությունները, որ իրենք կատարել են կաթի վերամշակման գործարանի իրականացնելիության հիմնավորման վերաբերյալ՝ որպես հիմնական միջոցառում, որն օգուտ կբերի համայնքի անասնապահներին: Վարկատուներն ու նրանց խորհրդականները հարցադրումներ կատարեցին հողի օտարման գործընթացի,

համայնքային հողերի օգտագործման, այլընտրանքային հողատարածքների առկայության, համայնքներից դուրս գտնվող սոցիալական այլ խմբերի կողմից հողի հնարավոր օգտագործման և ԿՊՎԾ բյուջեի վերաբերյալ:

Հասարակական լսումների նպատակով հանդիպումից հետո համայնքապետարանը խորհրդատուներին հայտնել է, որ տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության ավարտից հետո կաթի վերամշակման գործարանի կառուցումը համարվել է անիրական՝ համայնքին պատկանող ընկերության բացման հետ կապված հնարավոր բախում առաջանալու պատճառով, երբ մի մասնավոր ներդրող դիտարկում էր համանման ձեռնարկատիրական գործունեություն սկսելու հնարավորության հարցը, ինչպես նաև համապատասխան շինությունների բացակայության հիմքով (հիմնական վարչական պատճառ է հանդիսացել հակասությունը մասնավոր հատվածի հետ):

Համայնքապետարանն առաջարկել է հյուրատուն կառուցել Դաշտադեմ համայնքում, ինչը նպատակահարմար չի համարվել Ծրագրի ընկերության կողմից՝ հատկապես անասնապահների վրա դրա սահմանափակ դրական ազդեցության (միայն փոքրաթիվ մարդկանց զբաղվածության ապահովման և համայնքների վրա հնարավոր սահմանափակ դրական ազդեցության) պատճառով: Լրացուցիչ քննարկումներից և խորհրդակցություններից հետո համայնքապետարանի և համայնքների ղեկավարներն առաջարկել են շարունակել Դաշտադեմում ոռոգման համակարգի համար լրացուցիչ աջակցության ցուցաբերումը՝ տրամադրելով նաև միջոցառումների ավելի ընդարձակ համալիր, ինչպիսիք են՝ վերապատրաստման դասընթացներն ու զբաղվածության առաջնահերթ ապահովումը, ինչի մասին մանրամասն ասվում է հաջորդ բաժնում:

Ընդհանուր առմամբ, 3 տարվա ընթացքում (2021 – 2023 թթ.) ԿՊՎԾ պատրաստման ժամանակահատվածում տեղական համայնքների հետ փոխգործակցության արդյունքում տեղի են ունեցել զգալի թվով հանդիպումներ և մեծ ներգրավվածություն ողջ գործընթացի ընթացքում վերաբնակեցման ազդեցությունների և առաջարկվող վերականգնման վերաբերյալ իրազեկվածության բարձր մակարդակ ապահովելու, ինչպես նաև բոլոր մասնակիցներին իրենց մտահոգությունների և տեսակետների հնչեցման հնարավորություն տալու նպատակով: Բացի դրանից, շահագրգիռ կողմերին բավականաչափ ժամանակ է տրվել իրենց ավանդի և պատասխան արձագանքի տրամադրման, ինչպես նաև կենսամիջոցների վերականգնման տարբերակների վերաբերյալ սեփական առաջարկությունների և տեսակետների մշակման նպատակով:

8 Հարկադրված վերաբնակեցման գնահատում և պլանավորում

8.1 Վերաբնակեցման սկզբունքներ

ԱՅԳ-1 Ծրագիրն առաջնորդվում է ստորև նկարագրված վերաբնակեցման սկզբունքներով՝

- Համակարգված կերպով բացահայտել Կենսագործունեության միջոցների վրա ազդեցությունները – Կենսագործունեության միջոցների վրա ազդեցությունները կորոշվեն համակարգված՝ տեղերում հողօգտագործումների ստուգման և ազդակիրների հետ փոխգործակցման միջոցով:
- Ապահովել Կենսագործունեության գործունեության շարունակականությունը – Կենսագործունեության միջոցների վերականգնման / բարելավման միջոցառումները պլանավորվելու են այնպես, որ համապատասխան դրամական և բնեղեն փոխհատուցման միջոցները գործեն նախքան ազդեցության տեղի ունենալը՝ ապահովելով, որ զգալի ներգործությունների ենթարկվող անձինք խոցելի վիճակում չհայտնվեն, երբ սկսվի տեղահանություն առաջացնող գործունեությունը: Կենսամիջոցների վերականգնման և օժանդակության այլ գործողությունների պլանավորման և իրականացման համար կպահանջվի լրացուցիչ ժամանակ՝ դրանց առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով:
- Խորհրդակցություններ. ԾԱԱ -նց հետ պետք է խորհրդակցել վերջիններիս Կենսագործունեության միջոցների մասին, նրանց տեղեկացնել կանխատեսվող ազդեցությունների մասին, խորհրդակցել փոխհատուցման տարբերակների վերաբերյալ և տեղեկացնել Ծրագրի իրականացման ընթացքի մասին:
- Աջակցություն խոցելի խմբերին. Պետք է բացահայտվեն խոցելի ԾԱԱ-նք և իրականացվեն հատուկ միջոցառումներ՝ ապահովելու, որ կենսամիջոցների վերականգնման միջոցառումներում հաշվի առնվեն նրանց խոցելի կարգավիճակից բխող առանձնահատուկ խոչընդոտները:

8.2 Հարկադրված վերաբնակեցման գնահատում

Հարկադրված վերաբնակեցման գնահատման ազդեցությունները հիմնվում են Ծրագրի համար հողի ձեռքբերման պահանջների (նկարագրված է վերոնշյալ բաժին 5.3-ում), սոցիալ-տնտեսական ելակետային պայմաններիրի (բաժին 6) և շահագրգիռ կողմերի պատասխան արձագանքի (բաժին 7), ինչպես նաև տեղում Ծրագրի խորհրդատուների և ճարտարագետների կողմից անմիջական ստուգման վրա:

8.2.1 Բնակելի տներ և կառույցներ

ՖՎ տեղանքի, ցանցի հետ փոխմիացումների և մոտեցող հնարավոր ճանապարհների տարածքների հետ կապված՝ ծրագրի ներգործությանը ենթարկվող բնակելի տներ, կառուցված շինություններ կամ հողաբարելավումներ չկան:

8.2.2 Ծառեր և մշակաբույսեր

Արևային ՖՎ տեղանքի կամ փոխմիացումների տարածքում գտնվող ծառերն ու մշակաբույսերը

ներգործության չեն ենթարկվում: Տնկված տնտեսական մշակաբույսերի փոքր տարածքը կարող է ներգործության ենթարկվել մոտեցող ճանապարհի պատճառով, եթե ընտրվի հյուսիսային կողմից տարբերակը, սակայն ԱՏՀ համակարգով կատարված վերլուծությունը (տե՛ս 5.3.3 կետը) ցույց է տալիս, որ գոյություն ունեցող ուղու և ուսագոտու (ճամփեզրի) լայնությունը հնարավոր է բավարար լինի:

Մշակաբույսերը վնասվում են Ճանապարհի նախապատրաստման ընթացքում ներխուժման հետևանքով, ինչն աննշան ազդեցություն կունենա ագարակատերերի վրա՝ ազդեցության ենթարկվող փոքր հողատարածքի պատճառով: Մշակաբույսերի վրա տեղի ունեցող բոլոր ազդեցությունների համար փոխհատուցում կկատարվի կանխիկ գումարով՝ դրանց փոխարինման ամբողջական արժեքով:

8.2.3 Անասնապահական գործունեություն

Արևային կայանի Ծրագրի շինարարությունը սկսելուց հետո ՖՎ տեղանքի տարածքն այլևս հասանելի չի լինի: Թեև տարածքում դեռևս առկա է արոտավայրերի առատություն, որոնք անասնապահները կարող են շարունակել օգտագործել, պետք է նկատի ունենալ մուտքի սահմանափակումը, ինչպես նաև մշակել և իրականացնել Կենսագործունեության միջոցների վերականգնում:

Ազդեցությունների մեծությունը և հողօգտագործման սահմանափակումները, որոնք տեղի կունենան Ծրագրի ողջ տևողության ընթացքում, կլինեն աննշան և փոքր, քանի որ Ծրագրի տեղանքի շրջակայքում կան հավասարապես կենսունակ հողերի ընդարձակ տարածքներ, և ամառային արոտավայրերի համար հողերի առկայությունը տարածքում չի ճանաչվել որպես անասնապահության համար սահմանափակում:

Համարվում է, որ Դաշտադեմի անասնապահները կենթարկվեն ավելի մեծ ազդեցության, քան Թալինի, Աշնակի և Կաթնաղբյուրի անասնապահները, քանի որ նախկին Դաշտադեմ համայնքի հողերի՝ ներգործության ենթարկվող տարածքների մասնաբաժինն ավելի մեծ է (թեև դեռ փոքր է): Հարցմանը մասնակցած անասնապահները հաստատել են հողի օգտագործումը, իսկ համայնքը հիմնվում է հիմնականում գյուղատնտեսության վրա:

8.2.4 Խոտաբույսերի, վայրի հատապտուղների, վառելափայտի հավաքում և որսորդություն

Խոտաբույսերի և վայրի հատապտուղների հավաքմամբ զբաղվում են սահմանափակ թվով տնային տնտեսություններ ցածր հաճախությամբ: Այն տնտեսական նշանակություն չունի տնային տնտեսությունների համար և օգտագործվում է բացառապես կենցաղային սպառման նպատակով:

Համայնքային հողերից վառելափայտի հավաքում Ծրագրի տեղանքում չի իրականացվում, քանի որ ծրագրի տեղանքն ունի խոտածածկ բուսականություն:

Սոցիալական հարցման մասնակիցներից մեկը նշել է, որ ինքն համայնքային հողերն օգտագործում է որսորդության նպատակով: Հարցվողը եղել է Թալին քաղաքից և Ծրագրի ավելի ընդարձակ տարածքը նշել է որպես լավ որսատեղի:

Խոտաբույսերի, վայրի հատապտուղների, վառելափայտի հավաքումը և որսորդությունը տնային տնտեսությունների համար էական տնտեսական գործունեություն չեն հանդիսանում, դրանցով զբաղվում են համայնքի փոքրաթիվ անդամներ, սահմանափակված չեն հողի առկայությամբ, կարող են իրականացվել տեղական համայնքներին ավելի հասանելի վայրերում, քան Ծրագրի տեղանքն է, և Համայնքի անդամները հաստատել են, որ չեն կանխատեսում Ծրագրի շինարարությունից բխող որևէ բացասական ազդեցություն:

Հետևաբար, հարկադիր վերաբնակեցման ազդեցությունը համարվում է աննշան:

8.2.5 Հարկադրված վերաբնակեցման գնահատման ամփոփագիր

Հարկադրված վերաբնակեցման ազդեցություններն ամփոփ նկարագրված են ստորև բերված աղյուսակում

Ազդեցության տեսակ	Ոչ կիրառելի	Աննշան	Փոքր	Միջին	Մեծ
Բնակելի տներ	Ո/Կ				
Կառույցներ, հողի բարելավումներ	Ո/Կ				
Ագարակատիրություն / Մշակաբույսեր	Ո/Կ *				
Անասնապահական գործունեություն		Թալին, Աշնակ, Կաթնաղբյուր	Դաշտադեմ		
Փայտի, խոտաբույսերի կամ հատապտուղների հավաքում		4 ազդակիր համայնքներ			
Որսորդություն		4 ազդակիր համայնքներ			
Մուտքի / հաղորդակցման սահմանափակումներ	Ո/Կ				

* Աննշան ազդեցություն կարող է առաջանալ մշակաբույսերի վրա՝ մուտքի ուղու լայնացման ժամանակ ներխուժման հետևանքով, եթե ընտրվի հյուսիսային կողմից ճանապարհը: Անհրաժեշտության դեպքում, այս ազդեցությունը կգնահատվի ԿՊՎԾ-ի հավելվածում:

8.3 Արոտի արժեքի հաշվարկ

Հաշվի առնելով, որ տեղանքում հիմնական տնտեսական գործունեությունն արածեցումն է, տեղանքի արածեցման արտադրողականությունը գնահատվել է որպես կողմնորոշիչ ԿՊՎԾ բյուջե ձևավորելու համար: Նկատի առնելով, որ լայնածավալ անասնաբուծական գործունեության առումով արոտավայրերի առկայությունը խոչընդոտ չէ անասուններ պահելու համար, համարվում է, որ գնահատմամբ գերազանցվում է Կենսագործունեության վրա իրական ազդեցությունը և, հետևաբար, այն օգուտ է հողօգտագործողներին:

Վարձվել է գյուղատնտեսության ոլորտի հայաստանյան փորձագետ («Գլոբալ Փարթներս Գրուփ» ՍՊԸ, գնահատումն իրականացվել է կադաստրի կոմիտեի կողմից որպես գնահատող հավաստագրված գյուղատնտեսության փորձագետի կողմից) անասնակերի արտադրողականության հետ կապված՝ հողատարածքի ներուժի գնահատման նպատակով: Գնահատման համար որպես հիմք են ծառայել հետևյալ գործոնները՝ հողաշերտի (գրունտի) բաղադրությունը, բերրիությունը և կլիման:

Հետազոտությամբ պարզվել է, որ մի շարք բնապահպանական բնութագրեր (քարքարոտ հողի բաղադրություն, կլիմա) և մարդածին գործունեությամբ պայմանավորված վնաս է հասցվել Ծրագրի տեղանքում հողի արտադրողականությանը: Մարդածին հիմնական ազդեցությունների թվում են՝ գերարածեցումը, չհամակարգված արածեցումը և հողի բերրիությանն աջակցման միջոցառումների բացակայությունը: Այս գործոնները հանգեցրին նրան, որ Ծրագրի տարածքում հողերն աստիճանաբար ենթարկվեցին քայքայման, էրոզիայի, առաջացնելով վարելահողերի առավել բերրի շերտի կորուստ:

Զեկույցում եզրակացություն է արվել, որ Ծրագրի հողատարածքի բուսականության որակը,

անասնակերային արժեքը և արտադրողականությունը չափազանց ցածր են: Վերոնշյալ հանգամանքների պայմաններում ծրագրի տեղանքում հողի ֆիզիկական հատկությունները վատթարացել են և գորտնուկազգիների ու հացահատիկային ընտանիքներին պատկանող բույսերը ժամանակի ընթացքում աստիճանաբար անհետացել են: Քայքայված հողի պատճառով Ծրագրի տեղանքում այժմ առկա են ցածր սննդային արժեք ունեցող սեզեր ու հատակամերձ կոշտ բույսեր: Ավելին, զեկույցում բացահայտվել է նաև, որ Ծրագրի տեղանքում բուսականության և հողաշերտի ծակոտկենության մակարդակը նույնպես նվազել է:

Զեկույցում գնահատված է Ծրագրի տեղանքում հողաշերտի բաղադրությունը: Պարզվել է, որ Ծրագրի տարածքն ունի լեռնատափաստանային լանդշաֆտ՝ կերպափոխվող բնորոշիչ մոխրագույն լեռնատափաստանով, ինչի հետևանքով տարածված են ցածր կրողունակությամբ գրունտները:

Ծրագրի տեղանքում հողածածկույթը ձևավորվում է նստվածքային գետաքարա-կրային գրունտի վրա: Այս հողերը կազմվածքով հատիկավոր են և ունեն առավելապես կավային կազմվածք՝ կմախքային զանգվածի բարձր պարունակությամբ, ինչը նշանակում է, որ հողում առկա են մեծ քանակությամբ ապարային բեկորներ: Ծրագրի տարածքում հայտնաբերված հողի այս տեսակը բնութագրվում է բուսահողի ցածր պարունակությամբ (1 - 1,5%): Այս տեսակի հողը նկատելիորեն քարքարոտ է. կան ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր:

Գյուղատնտեսության ոլորտի փորձագետի զեկույցում եզրակացություն է արվել, որ Ծրագրի տեղանքի տարածքը, որի համար կատարվել է գնահատումը, պետք է համարել անբարենպաստ և տնտեսապես անարդյունավետ հողամասին հասցված վնասի, հողի բաղադրության և այն որպես արդյունավետ գյուղատնտեսական արոտավայրի վերափոխելու կամ վերականգնելու նպատակով բարենպաստ չլինելու պատճառով:

Հողատարածքի արոտային արժեքի հաշվարկման համար օգտագործվել է բուսածածկույթի խտությունը: Ցողունների ընդհանուր թիվը հաշվարկվել է 1մ^2 ընդհանրացված տարածքի վրա 4 բուսաբանական և տնտեսական խմբերի համար (լոբազգիներ, հացազգիներ, մոլախոտեր, սիզախոտեր և կնյուններ): Որպես օգտակար տեսակներ հաշվի են առնվել լոբազգիների և հացազգիների ցողունների ընդհանուր թիվը և մոլախոտերի ցողունների 50%-ը: Անասնակերի արտադրության բարձրարդյունավետ տարածքների յուրաքանչյուր 1մ^2 -ում լինում է մոտ 1000 ցողուն (1 հա-ում՝ 10 մլն): Տեղանքի տեսազննման ընթացքում Ծրագրի տարածքում իրականացվել են նմուշային դիտարկումներ ու հաշվարկներ: Արդյունքում պարզվել է, որ 1մ^2-ում առկա է լոբազգիների, հացազգիների և մոլախոտերի 130 ցողուն կամ 1 հա-ում՝ 1300000: Այս ցածր խտությունը պայմանավորված է հողի քարքարոտ բնույթով և վերը նկարագրված հողի քայքայմամբ:

Հաշվի առնելով, որ բարձր արդյունավետությամբ արոտավայրերի միջին բերքատվությունը կազմում է 1,5 տոննա անասնակեր մեկ հեկտարից, իսկ 1 հա անասնակերային հողատարածքում աճեցվում է 10 մլն ցողուն, Ծրագրի տեղանքում 519,36 հա հողի և 1,6 հա մոտեցող ճանապարհի արտադրողականությունը կկազմի՝

520,96 x [(1,5տ x 1 300 000 հատ) %10 000 000 հատ] =101,59տ

Գյուղատնտեսության համար տարածքի ընդհանուր արտադրողականությունը ակնկալվում է տարեկան 101,59 տոննա անասնակերին համարժեք, որը 2023 թվականի գներով կկազմի 6 080 000 ՀՀ դրամ: Հարմարվելու նպատակով առաջարկվող ժամկետի համար, որը կիրառվելու է որպես բյուջեի հաշվարկման չափորոշիչ, առաջարկվել է 5 տարի ժամանակահատված՝ տարածաշրջանում Մասդարի մյուս ԿՊՎԾ –ներին համապատասխան, հետևաբար ընդհանուր բյուջեն առաջարկվել է սահմանել 30 400 000 ՀՀ դրամ: Բյուջեի հաշվարկման մանրամասները և արդյունքները ներկայացվել և համաձայնեցվել են տեղական իշխանությունների և մասնակիցների հետ չորրորդ հանրային խորհրդակցության ժամանակ:

8.4 Կենսագործունեության վերականգնման միջոցառումներ

8.4.1 Կենսագործունեության վերականգնման միջոցների հետազոտում

8.2.5 կետում նկարագրված աննշան և փոքր ազդեցությունների փոխհատուցման նպատակով առաջարկվել են Կենսագործունեության վերականգնման մի շարք հնարավոր միջոցառումներ: Այս միջոցառումներն առաջարկվել են հիմնվելով տեղեկատվության հետևյալ աղբյուրների վրա.

- Սոցիալ-տնտեսական տեսական և տնային տնտեսությունների հետազոտությունների տեղեկատվություն
- Խորհրդակցական քննարկումներ և շահագրգիռ կողմերի ներգրավում, այդ թվում՝ համայնքների անդամների, անասնապահների և համայնքների ղեկավարների առաջարկությունները
- Հայաստանում ենթակառուցվածքային ծրագրերի տնտեսական տեղաշարժման հետ կապված Կենսագործունեության արդյունավետ միջոցառումների վերաբերյալ սոցիալ տնտեսական ոլորտի տեղական մասնագետների փորձը
- Միջազգային ՖՎ ծրագրերի ոլորտում տնտեսական տեղաշարժման հետ կապված Կենսագործունեության միջոցառումների վերաբերյալ վերաբնակեցման միջազգային մասնագետների և Մասդարի փորձը

Կենսագործունեության վերականգնման նպատակով առաջարկվող միջոցառումներն ու դրանց հետազոտման և գնահատման համար օգտագործվող չափորոշիչներն ամփոփ նկարագրված են ստորև:

Հետազոտման չափորոշիչները *մասնավորապես* ներառում են՝ Դաշտադեմում Կենսագործունեության միջոցների դրական առանձնահատուկ բարելավումները (քանի որ Դաշտադեմի վրա ազդեցությունը համարվում է փոքր, մինչդեռ մյուս համայնքների համար այն չնչին է), ուղղակի օգուտներն անասնապահների համար, քանի որ դա նշանակալի ազդեցություն կրող և տնտեսական կարևորություն ներկայացնող միակ գործունեությունն է, ինչպես նաև դրական ազդեցությունները խոցելի խմբերի վրա:

Աղյուսակ 2. Կենսագործունեության վերականգնման հնարավոր միջոցառումների հետազոտում

Հնարավոր գործողություն և նկարագրություն	Շահող բնակավայրեր	Թիրախային օգուտներ անասնապահին	Օգուտը Խոցելի ԾԱՏ-երին	Արձագանք և լրացուցիչ տեղեկատվություն
1. Խոշոր եղջերավոր անասունների / ընտանի անասունների պատվաստում. Անասունների համար պատվաստանյութերի տրամադրմանն աջակցելը կարող է հանգեցնել անասունների առողջության և արտադրողականության ընդհանուր աճի:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ)	Պետական շահագրգիռ կողմը ընդգծել է դեղնախտի բուժմանը/կանխարգելմանն աջակցելը որպես պոտենցիալ օգտակար միջոցառում: Անասնապահները և տեղական ինքնակառավարման մարմինները նշել են, որ նրանք կառավարությունից ստացել են բավարար չափով պատվաստանյութեր և այդ միջոցառումը օգտակար չեն համարել:
2. Անասնակերի տրամադրում. Ծրագիրը կարող է Կենսագործունեության վերականգնման պլանի (ԿՊՎԾ) բյուջե հատկացնել անասնակերի ձեռքբերմանը տարվա այն ժամանակահատվածում, որը կարող է առավել օգտակար լինել Ծրագրի ազդակիր տնտեսությունների (ԾԱՏ) համար (օրինակ՝ ձմռանը): Անասնակերը կբաժանվի՝ ելնելով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակից: Մասդարը իրականացրել է այս միջոցառումը այլ ֆոտովոլտայիկ (ՖՎ) ծրագրերում:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ)	Հաշվի առնելով տնտեսությունների քանակը, որոնք ունեն ընտանի անասուններ և բյուջե, կապված տեղանքի տարածքի արդյունավետության հետ, խորհրդակցությունների ընթացքում պատասխան արձագանքը եղել է այն, որ այս միջոցառումը փոքր ազդեցություն է ունենալու յուրաքանչյուր տնտեսության վրա:
3. Բուսական հատումների իրականացում տեղանքի մաքրման ժամանակ (շահագործման և տեխսպասարկման փուլ). Շահագործման ժամանակահատվածում հատված բուսականությունը կարող է հավաքվել և տրամադրվել անասնապահներին անասուններին կերակրելու համար: Մասդարը իրականացրել է այս միջոցառումը այլ ֆոտովոլտայիկ ծրագրերում:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ)	Հաշվի առնելով տեղանքի տարածքի ցածր արդյունավետությունը՝ այս միջոցառումը չէր ակնկալվում, որ ունենալու է նշանակալի դրական ազդեցություն և խորհրդակցությունների ընթացքում չէր համարվել հետաքրքիր:

4. Կաթի վերամշակում. Կաթի վերամշակումը կարող է հանդիսանալ կաթի ավելացված արժեքի բարձրացման համար հնարավորություն, որի արդյունքում շահելու են բոլոր անասնապահները՝ բարձրացնելով / կայունացնելով կաթի գները:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ):	Ի սկզբանե հասարակական լսումների մասնակիցները և համայնքապետարանի ներկայացուցիչները համարել էին այս միջոցառումը շատ օգտակար: Սակայն համայնքապետարանի կողմից իրականացված լրացուցիչ ստուգումից հետո որոշվեց, որ նմանատիպ նախաձեռնություն գնահատվել էր մասնավոր ներդրողի կողմից և այն, որ համայնքը չէր կարող ստեղծել հանրային ընկերություն, որը կարող էր ուղղակիորեն մրցակցել մասնավոր հատվածի հետ:
5. Հյուրատուն Դաշտադեմ համայնքում. Առաջարկվել է, որ Դաշտադեմում առկա համայնքային շենքը կարող է վերակառուցվել և օգտագործվել որպես հյուրատուն: Հյուրատունը կարող է աշխատեցվել համայնքապետարանի կողմից՝ ստեղծելով որոշակի զբաղվածություն և գյուղում դիվերսիֆիկացնելով եկամուտները:	Դաշտադեմ	Ոչ	Ոչ	Այս միջոցառումը օգուտ կբերի Դաշտադեմ համայնքին, սակայն չի ունենա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն անասնապահության կամ գյուղատնտեսական գործունեության բարելավման վրա: Բացի այդ, ստեղծված աշխատատեղերի թիվը կլինի ցածր: Այս միջոցառումը ԿՊՎԾ հատուցման առումով սոցիալական ոլորտի փորձագետների կողմից չի համարվել պատշաճ:
6. Աջակցություն Դաշտադեմում ոռոգումների բարելավմանը. ՀՆԸ կողմից տրամադրված նվիրաբերությունը օգտագործվել է ոռոգումների բարելավման համար: Հետագա բարելավումները անհրաժեշտ են բոլոր տնտեսություններին հասանելի լինելու և ջրի կորստից խուսափելու համար:	Դաշտադեմ	Անուղղակի, ջրի հասանելիություն անասունների և ոռոգման համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ):	Դաշտադեմում բոլոր տնտեսությունների համար ոռոգման ցանցի ընդարձակումը և ջրի կորուստների կանխումն ունի ուղղակի դրական ազդեցություն բնակավայրի բնակչության վրա, հատկապես նրանց վրա, ովքեր զբաղված են գյուղատնտեսական գործունեությամբ (ընտանի անասուններ, պտղատու այգիներ և մշակաբույսեր):

7. Ուսուցում և աջակցություն կառավարության ծրագրերը հասանելի դարձնելու համար. Կառավարական շահագրգիռ կողմերը նախնական խորհրդակցությունների ընթացքում ընդգծել են, որ գյուղական համայնքները հաճախ տեղյակ չեն գյուղատնտեսական գործունեությանն ուղղված պետական աջակցության մասին, և առաջարկեցին անցկացնել դասընթացներ և աջակցություն ցուցաբերել գյուղական համայնքներին, որպեսզի նրանց համար կարողանան հասանելի դառնալ գյուղական Կենսագործունեության բարելավմանն ուղղված պետական ծրագրերը:	Բոլոր չորս բնակավայրերը	Աջակցություն գյուղատնտեսությանը	Հնարավոր օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, երբ պետական աջակցությունը հասցեական է:	Համայնքի անդամները և տեղական ինքնակառավարման մարմինները նշել են, որ պետական ծրագրերը հայտնի են իրենց և որ նրանք հետաքրքրված չեն այդ միջոցառմամբ:
8. Արոտավայրերի արդյունավետության բարելավում կամ համայնքային արոտավայրերի հասանելիության բարելավում. Համայնքային արոտավայրերի արդյունավետության բարելավումը հողերի բարելավման միջոցով կամ դեպի արոտավայրեր հասանելիության համար անհրաժեշտ ջանքերի կրճատումը կարող է իր տեսակով հարմար ուղղակի հատուցում արոտավայրերի կորստի դիմաց:	Բոլոր չորս բնակավայրերը կամ Դաշտադեմը	Աջակցություն գյուղատնտեսությանը	Հնարավոր օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, երբ պետական աջակցությունը հասցեական է:	Համայնքի անդամները և տեղական ինքնակառավարման մարմինները նշեցին, որ պետական ծրագրերը հայտնի են իրենց և որ նրանք հետաքրքրված չեն այդ միջոցառմամբ:
9. Անասնապահների համար պատսպարանների կառուցում համայնքային արոտավայրերում. Հաշվի առնելով ամառային բարձր ջերմաստիճանները այդ տարածքում և ստվերային տարածքների և ծառերի բացակայությունը՝ անասունների արածեցումը կարող է ջանքեր պահանջող զբաղմունք լինել: Համայնքային արոտավայրերում անասնապահների պատսպարանները կապահովեն ստվերային տարածքներ և հանգստի վայրեր՝ նպաստելով անասնապահների գործունեությանը:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ):	Խորհրդակցությունների ընթացքում մտահոգություն հայտնվեց պատսպարանների սպասարկման կետի կառուցման վերաբերյալ: Համաձայնեցվեց կառուցել անասնապահների պատսպարաններ համայնքային արոտավայրերում, ներառյալ Ծրագրի շրջանակներում դրանց սպասարկման բյուջեի տրամադրումը:

10. Անասնապահական տնտեսությունների համար շինարարությունում զբաղվածությամբ ապահովման առաջնահերթություն. Անասնապահական տնտեսությունների անդամներին կարող է տրվել առաջնահերթություն տեղական համայնքներում շինարարական անձնակազմի ներգրավվման ժամանակ՝ ապահովելով լրացուցիչ եկամուտ տվյալ տնտեսությունների համար:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահական տնտեսությունների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ):	Շինարարությունում առաջնահերթ զբաղվածությունը ունենում է դրական ազդեցություն տնտեսությունների վրա, որոնք այդ գործունեությունից օգուտ են ստանում: Այդուհանդերձ, ոչ բոլոր անասնապահական տնտեսություններում կարող են լինել մարդիկ, ովքեր ցանկանում են կամ պատրաստ են միանալ շինարարական աշխատուժին:
11. Իրավական աջակցություն գյուղական հողերի գրանցման համար. Հողի գրանցման համար պահանջների կատարման հարցում գյուղական տնտեսություններին աջակցելը կարող է դրական ազդեցություն ունենալ տիրապետման երաշխիքի և հետագա գյուղատնտեսական գործունեության վրա: Այն Հայաստանում բարեհաջող իրականացվել է այլ ծրագրերում:	Բոլոր չորս բնակավայրերը	Ոչ, սակայն հնարավոր օգուտ գյուղատնտեսական գործունեության համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ տնտեսությունները, որոնք օգտագործում են չգրանցված հող, միտված են խոցելի լինել:	Խորհրդակցությունների ընթացքում մասնակիցները նշել են, որ հողի գրանցումը ազդակիր համայնքներին չի մտահոգում, և այդ միջոցառումն օգտակար չի լինի:
12. Դասընթացներ անասնապահների համար. Անասնապահներին անասնաբուժական առողջության և անասնապահական տնտեսության վարման ուսուցումը հնարավոր կերպով կարող է բարձրացնել արդյունավետությունը և կենսունակությունը:	Բոլոր չորս բնակավայրերը	Այո, ուղղակի օգուտ անասնապահների համար	Անուղղակի օգուտ խոցելի ԾԱՏ-երի համար, քանի որ գյուղատնտեսությունից կախում ունեցող տնտեսությունները ցույց են տալիս ավելի բարձր խոցելիություն (ավելի ցածր եկամուտ):	Որոշ անասնապահ մասնակիցներ նշեցին, որ իրենք անասնապահության կամ գյուղատնտեսության վերաբերյալ դասընթացները չեն դիտարկում որպես Կենսագործունեության վերականգնման արժեքավոր միջոց: Դա համարվում է ողջամիտ ընկալում, քանի որ անասնապահները պրոֆեսիոնալ են և շատ փորձառու, բայց, ինչպես ցույց է տալիս խորհրդատուի և կառուցապատողի փորձը, դասընթացները կարող են տրամադրել լրացուցիչ արժեքավոր տեղեկատվություն, որը կարող է օգուտ բերել մասնակիցներին, ինչպես դա տեղի է ունեցել Մասդարի այլ ծրագրերում:

13. Դասընթաց կանանց համար կարիերայի առաջխաղացման և զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով. Կանայք բախվում են առանձնակի մարտահրավերների հետ աշխատաշուկա մուտք գործելիս, և կանանց համար հատուկ դասընթացները կարող են նպաստել նրանց աշխատանքի տեղավորման կարողունակությանը:	Բոլոր չորս բնակավայրերը	Ոչ	Այո, կանայք դասակարգվել են որպես խոցելի խումբ:	Դաշտադեմում թիրախային խմբում կանայք նշել են, որ այդ դասընթացը հետաքրքրում է իրենց:

8.4.2 Կենսագործունեության վերականգնման ընտրված միջոցառումներ

Վերոշարադրյալ սոցիալ տնտեսական պայմանների գնահատումից, (բաժին 6), շահագրգիռ կողմերի պատասխան արձագանքի և ավանդի (բաժին 7), հարկադրական վերաբնակեցման ազդեցությունների (8.2) որոշումից և Կենսագործունեության վերականգնման հնարավոր միջոցների հետազոտումից հետո ընտրվել են Կենսագործունեության վերականգնման միջոցառումները: Փոխհատուցում ստանալու մանրամասն իրավունքները ազդակիր յուրաքանչյուր խմբի համար սահմանված են ստորև տրված 8.5 կետում:

Ընտրվել են Կենսագործունեության վերականգնման հետևյալ միջոցառումները.

- Դաշտադեմում ոռոգման համակարգի բարելավման աջակցություն
- Պատսպարանների կառուցում համայնքային արոտավայրերում
- Անասնապահական տնային տնտեսությունների համար շինարարությունում զբաղվածությամբ ապահովման առաջնահերթություն
- Դասընթացներ անասնապահների համար
- Դասընթաց կանանց համար կարիերայի առաջխաղացման և զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով

Միջոցառումների առաջարկվող համակցությունը ներառում է կոնկրետ նպատակային աջակցության մեկ հիմնական չափանիշ Դաշտադեմ համայնքի համար, նաև չորս միջոցառումներ, որոնք օգուտ կբերեն չորս համայնքներին: Այն ներառում է երեք միջոցառում անասնապահներին / անասնապահության վարմանն աջակցելու նպատակով և միջոցառում, որը նախատեսված է կոնկրետ կանանց աջակցելու համար: Ակնկալվում է, որ այդ բոլոր միջոցառումներն ունենալու են բարձր դրական ազդեցություն ավելի աղքատ տնային տնտեսությունների վրա, որոնք ավելի մեծ կախվածություն ունեն գյուղատնտեսական հողօգտագործման և անասնապահական գործունեությունից:

<u>Դաշտադեմում ոռոգման համակարգի բարելավման աջակցություն</u>

ՀՆԸ կողմից Դաշտադեմին տրամադրված նվիրաբերությունն օգտագործվել է ջրառոռոգման համակարգի բարելավման նպատակով, ջուրը գոյություն ունեցող խողովակագծից Դաշտադեմ բնակավայրի հյուսիսային մաս բերելու և այն մի քանի տնային տնտեսություններին բաշխելու համար: Բարելավման որոշ աշխատանքներ արդեն իրականացվել են Վարկատուի՝ պատշաճ շրջահայացության նպատակով տեղանք կատարած այցելությունների ժամանակ (ցույց են տրված Ցուցապաստառ 3 –ում՝ 5.2.1 կետ):

Տեղական իշխանությունների ներկայացուցիչները նշել են, որ Դաշտադեմ բնակավայրի ոռոգման ջրի բաշխման նպատակով լրացուցիչ ներդրումը թույլ կտա բնակավայրի բոլոր (մնացած մոտ 40) տնտեսություններին ջուր ստանալ և նվազեցնել ջրակորուստները: Ակնկալվում է, որ դա կբարելավի բնակավայրում մշակաբույսերի և պտղատու այգիների վիճակը, ինչպես նաև անասուններին կապահովի խմելու ջրով:

Այս միջոցառման իրականացումը կղեկավարվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Վերևում նկարագրված նպատակների բավարարման համար նախագծին և բյուջեին (ներառյալ կապալառուների առաջարկներին)՝ կատարվելիք մանրամասն առաջադրանքների հետ միասին կմասնակցի համայնքապետարանը: Դիտարկելուց և ընդունելուց հետո Կենսագործունեության վերականգնման այս միջոցառման բյուջեն կփոխանցվի համայնքապետարանին: Վերջինս նշել է, որ եթե արոտավայրային տարածքների 30,4 միլիոն ՀՀ դրամ արտադրողականության (8.2.5) վրա հիմնված հատկացվող բյուջեն ըստ համաձայնեցված ԿՊՎԾ -ի բավարար չլինի այս միջոցառումն իրականացնելու համար, ապա համայնքապետարանը լրացուցիչ միջոցներ կհատկացնի (քանի որ ստացել է բյուջետային լրացուցիչ աջակցություն իշխանության կենտրոնական մարմիններից, ինչպես նկարագրված է 5.2.2 կետում):

Անասնապահների համար ամառային պատսպարանների կառուցում համայնքային արոտավայրերում

Ծրագրի տարածքում, որտեղ բացակայում են ծառերը և գերակշռում է տարախոտային բուսականությունը, չկան ստվերային կամ ծածկված գոտիներ: Ամռանը Հայաստանում կարող են բարձր ջերմաստիճաններ գրանցվել, որի պատճառով անասնապահությունը դառնում է ծանր գործունեություն:

Անասնապահական պատսպարանները գործնական լուծում են հանդիսանում անասնապահների աշխատանքի պայմանների բարելավման (ներառյալ արևահարումից պաշտպանման) ուղղությամբ, երբ առկա է լինում ստվերոտ տարածք, որտեղ անասնապահները կարող են նստել և հանգստանալ՝ մինչ անասունները կարածեն մոտակայքում:

Ազդակիր համայնքներից յուրաքանչյուրում անասնապահական պատսպարանների տեղադրումը Կենսագործունեության վերականգնման երկար սպասված միջոցառում է եղել, սակայն բարձրացվել են երկու մտահոգություններ.

- Պատսպարանների սպասարկումը
- ԿՊՎԾ բյուջերի տրոհումը տարբեր միջոցառումների միջև կարող է սահմանափակել այն միջոցառման արդյունավետությունը, որին տրվել է ամենաբարձր առաջնահերթությունը, այն է՝ ամբողջ Դաշտադեմ բնակավայրը ոռոգման ջրով ապահովելը:

Առաջին մտահոգությանն անդրադառնալու նպատակով Ծրագիրը հաստատել է, որ պատսպարանների սպասարկման բյուջեն հատկացվելու է տարիներ 4, 8 և 12 -ում: Երկրորդ մտահոգության վերաբերյալ Ծրագիրը հաստատել է, որ տեղանքի արտադրողականության հիման վրա հաշվարկված ԿՊՎԾ բյուջեն ամբողջությամբ կհատկացվի ջրառոռոգման բարելավումների համար, իսկ անասնապահների համար պատասպարանների բյուջեն կտրամադրվի առանձին՝ Ընկերության կողմից:

Հանգստի տարածքների տեղաբաշխման (համայնքային արոտավայրորում) ու դրանց կատուցվածքին վերաբերող հարցերը կքննարկվեն անասնապահների և տեղական իշխանության մարմինների հետ:

Ցուցապաստառ 11. Քննարկումների ժամանակ ցույց տրված արևապաշտպան կատուցվածքի օրինակ

Անասնապահական տնտեսությունների շինարարությունում զբաղվածությամբ ապահովման առաջնահերթություն

Շինարարական անձնակազմի հավաքագրման ժամանակ առաջնահերթությունը կտրվի ազդակիր չորս համայնքների անասնապահական տնտեսությունների անդամներին, ինչը լրացուցիչ եկամուտ կապահովի այդ տնտեսությունների համար:

Ծրագիրը կստեղծի ստուգման համակարգ, ինչը կապահովի, որ առաջնահերթությունը տրվի տեղաբնակ աշխատողներին՝ այն տնտեսություններից, որոնք գյուղատնտեսական անասուններ են պահում, նաև կկազմի առաջնահերթ անասնապահական տնտեսությունների անդամների ցուցակ, որոնք պատրաստակամ են մասնակցել Ծրագրի շրջանակում շինարարական աշխատանքներին: Ոչ որակյալ բանվորական աշխատուժ ներգրավելիս կապալառուներն ու ենթակապալառուները նախապատվությունը կտան առաջնահերթության ցուցակում ներառված թեկնածուներին, ինչպես նաև երբ առաջնահերթության թեկնածուն ունի որոշակի հմտություններ և բավարարում է պահանջվող տեխնիկական չափորոշիչներին, կներգրավվի կիսաորակյալ կամ որակյալ աշխատուժի պաշտոններում: Բոլոր պաշտոնները կհամապատասխանեն Ծրագրի աշխատուժի և աշխատանքային պայմանների կառավարման պլանին:

Դասընթացներ անասնապահների համար

Անասնապահներին անասնաբուժական առողջության և անասնապահական տնտեսության վարման ուսուցումը հնարավոր կերպով կարող է բարձրացնել գյուղատնտեսական անասունների արդյունավետությունը և կենսունակությունը:

Քննարկումների ժամանակ անասնապահներն ու տեղական համայնքների ղեկավարները նշել են, որ այս նախաձեռնության նկատմամբ հետաքրքրվածությունը ցածր է, քանի որ համանման նախորդ դասընթացները արժեքավոր չեն եղել մասնակիցների համար: Ինչպես ԿՊՎԾ խորհրդատուն, այնպես էլ Մասդարը հասկանում են, որ անասնապահներն ու ագարակատերերն իրենց գործում և տեղի պայմանների իմացությամբ շատ արհեստավարժ են, սակայն ինչպես ցույց է տալիս Մասդարի փորձը, նույնիսկ եթե դասընթացի բովանդակության մեծամասնությունը հայտնի է մասնակիցներին, երբ թեմաներն ու վերապատրաստողները կամ հրավիրվածները լավ են ընտրված, միշտ կան տեղեկատվության նոր մասնիկներ, որոնք օգտակար են մասնակիցների համար: Համանման դեպք հիմնավորվել է Մասդարի ԿՊՎԾ փաստաթղթերով Զարաֆշան ՀողմԷԿ –ի նախագծում (Ուզբեկստան), երբ մասնակիցները (անասնապահներն ու ագարակատերերն) սկզբում ցածր ակնկալիքներ են ունեցել, սակայն դասընթացի գնահատման փուլում պարզել են, որ անասնաբուժական առողջության վերաբերյալ բովանդակության որոշ մասեր փաստացիորեն իրենց համար նորություն են եղել և օգտակար վերջին տարիներին իրենց առջև ծառացած որոշ մարտահրավերների հաղթահարման առումով:

Խորհրդակցողները համաձայնել են այս միջոցառման վերաբերյալ՝ պայմանով, որ այն չիրականացվի ըստ ԿՊՎԾ բյուջերի՝ այլ միջոցառումների բյուջեի հաշվին, ինչը համաձայնեցվել էր 4-րդ քննարկման հանդիպման ժամանակ (8.3 կետ): Ընկերությունը հանձայնել է, որ այս միջոցառումը ֆինանսավորվի առանձին՝ ի լրումն արոտավայրերի արտադրողականության հիման վրա հաշվարկված ԿՊՎԾ բյուջեի:

Անասնապահներին ու տեղական իշխանություններին խորհրդատվություն կտրամադրվի գերադասելի թեմաների, վայրերի, ամսաթվերի և ժամկետների վերաբերյալ: Տրանսպորտը կապահովվի անվճար: Ծրագրի համար նաև անհրաժեշտ կլինի տեղեկություններ ունենալ նախորդ, անբավարար դասընթացների վերաբերյալ՝ ըմբռնելու համար, արդյոք խնդիրը եղել է դասընթացավարների, թեմաների ընտրությունը, թե երկուսն էլ:

Ցուցապաստառ 12. Անասնաբուժական առողջության թեմայով դասընթաց Զարաֆշան ՀՈՂՄԷԿ ԾԱԱ -նց համար (Ուզբեկստան)

<u>Դասընթաց կանանց համար՝ կարիերայի առաջխաղացման և զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով</u>

Կանայք բախվում են առանձնակի մարտահրավերների հետ աշխատաշուկա մուտք գործելիս: Դաշտադեմում թիրախային խմբերից մեկում մասնակիցները նշել են, որ իրենք հետաքրքված են զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով թիրախավորված դասընթացներին (օրինակ՝ SS, վարչական խնդիրներ, կրթության և աշխատանքի վերաբերյալ տեղեկությունների պատրաստում և այլն) մասնակցությամբ: Այդ դասընթացները կնպաստեն կանանց աշխատանքի տեղավորման հնարավորությանը:

Տեղաբնակ կանանց ու տեղական իշխանություններին խորհրդատվություն կտրամադրվի գերադասելի թեմաների, վայրերի, ամսաթվերի և ժամկետների վերաբերյալ: Տրանսպորտը չորս գյուղերից կտրամադրվի անվճար:

Լրացուցիչ օժանդակություն խոցելի ԾԱՏ -երին

Ծրագրի ՀԿՄ -ը կաշխատի տեղական իշխանությունների հետ խոցելի ԾԱՏ -երը հետևյալ երեք խմբերում դասակարգելու նպատակով՝

- Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ
- Տնային տնտեսություններ, որոնց ղեկավարի տարիքը 60 -ից բարձր է, և որտեղ բացակայում են 25-60 տարեկան անդամները
- Տնային տնտեսություններ, որտեղ կան հաշմանդամություն ունեցող անդամներ

Խոցելի խմբերը ՀԿՄ -ի կողմից կներգրավվեն առանձին կարգով, հավաքագրելով Կենսագործունեության վերականգնման միջոցառումների մանրամասն մշակման և իրականացման հետ կապված նրանց արձագանքներն ու նախընտրությունները, հասկանալով ու համաձայնեցնելով այնպիսի հատուկ միջոցառումներ, որոնց միջոցով կվերացվեն Կենսագործունեության վերականգնման միջոցառումներում նրանց մասնակցության խոչընդոտները: Այս հարցը դիտարկվում է յուրաքանչյուր դեպքի համար առանձին, սակայն կարող է առնվազն ներառել հետևյալը՝

- Անվճար տեղափոխում դասընթացների տրամադրման վայր
- Ուսումնական հատուկ նյութեր կամ մոտեցումներ (օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցողների համար)
- Շինհրապարակի գրասենյակներում աշխատանքային տեղերի ստեղծում խոցելի ԾԱՏ -երի հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող անդամների զբաղվածությանը նպաստելու նպատակով
- Երեխաների համար նախադպրոցական հիմնարկների կազմակերպում կամ դրանց հասանելիության ապահովում դասընթացների անցկացման ժամանակ կամ աշխատանքի տեղավորված կանանց աշխատանքային ժամերին:

Յուրաքանչյուր խոցելի ԾԱՏ մասնակցության գործընթացը պետք է առանձին փաստաթղթավորվի:

8.5 Իրավասություն և աջակցություն ստանալու թույլտվություն

Կենսագործունեության միջոցների վրա Ծրագրի գործունեության հետևանքով առաջացող վերը նկարագրված ազդեցությունների հիման դասակարգված են Ծրագրի Ազդակիր Անձանց (ԾԱՏ) երկու խմբեր, որոնք իրավունք ունեն ստանալ Կենսագործունեության միջոցների աջակցություն: Ի լրումն, իրավունքների սահմանման նպատակով կազմված է լրացուցիչ դասերի ցանկ այն դեպքերի համար, եթե չնախատեսված ազդեցություններ տեղի ունենան մոտակայքում գտնվող հողերի օգտագործման վրա:

Աղյուսակ 3. Աջակցության ստացման իրավունքներ

Ակտիվի կորուստ / ազդեցության նկարագրություն	Ազդակիր անձինք	Տրամադրվող աջակցությունը	Կիրառելիություն
Համայնքային հողի և դրա հետ կապված պաշարների հասանելիության կորուստ (արոտավայր, հավաքում, որս)	Համայնքի անդամները Դաշտադեմ բնակավայրից	Դաշտադեմ բնակավայրի ջրառոռգման համակարգի բարելավում	Դաշտադեմ բնակավայր
Համայնքային արոտավայրի հասանելիության կորուստ	Գյուղատնտեսական անասնապահներ Թալինից, Դաշտադեմից, Աշնակից և Կաթնաղբյուրից	Համյանքային արոտատեղիներում անասնապահների պատսպարանների հասանելիություն (կառուցումն ու սպասարկումն Ընկերության կողմից) Ծրագրի շինարարությունում աշխատանքի տեղավորման առաջնահերթություն գյուղատնտեսական անասուններ պահող տնային տնտեսությունների համար: Դասընթացներ անասնապահների համար անասնաբուժական առողջության, արտադրողականության բարձրացման և պետական ծրագրերին հասանելիության ոլորտների վերաբերյալ:	Անասնապահները / Գյուղատն, անասուններ ունեցողները Թալինից, Դաշտադեմից, Աշնակից և Կաթնաղբյուրից
Մշակաբույսերի կորուստ և/կամ գյուղատնտեսական հողատարածքի պատրաստում	Ագարակատերեր	Դրամական փոխհատուցում ըստ փոխարինման արժեքի կամ պետական գնահատման, կամ որն ավելի բարձր կլինի, մշակաբույսերի և հողի նախապատրաստման / բարելավման համար (մակերեսային քարերի մաքրում և հողի հերկում), ինչ վիճակում որ եղել է մշակաբույսերին / գյուղատնտեսական հողին վնաս պատճառելու ժամանակ:	Ազդեցություններ չեն ակնկալվում

Խոցելի անձինք. կիրառելի է վերը նշված ցանկացած ակտիվի կամ ազդեցության նկատմամբ	Թալին, Դաշտադեմ, Աշնակ և Կաթնաղբյուր բնակավայրերում սահմանված խոցելի տնային տնտեսություններ	Կտրամադրվեն օժանդակության մի շարք այլ հատուկ միջոցներ խոցելի և ոչ համամասնական ազդեցություններ կրող մարդկանց աջակցելու և որոշված առանձնահատուկ խոցելիությունն արտացոլելու նպատակով: Դիտարկվող աջակցության միջոցառումները համառոտ տրված են ստորև. Անհատական մոտեցում խոցելի ԾԱՏ -երին Կենսագործունեության վերականգնման միջոցառումների մանրամասն մշակման վերաբերյալ նրանցից արձագանքների ստացման և ԿՎ միջոցներից օգտվելիս նրանց հանդիպող խնդիրների մասին պատկերացում կազմելու նպատակով: Դասընթացներ կանանց համար՝ թիրախավորելով զբաղվածության հնարավորության բարձրացման հմտությունները և կարիերային առաջնթացը, նաև «ստաժիրովկայի» հնարավորությունը Ծրագրում: Հատուկ միջոցառումներ Կենսագործունեության վերականգնման միջոցներին խոցելի տնտեսությունների հասանելիությունն ապահովելու նպատակով (օրինակ՝ անվճար տրասպորտ դասընթացի վայր, հաշմանդամություն ունեցող տնտեսությունների անդամների զբաղվածություն, հատուկ ուսուցում մինչ Ծրագրի շրջանակում նրանց աշխատանքի ընդունելը:	Տարբեր տիպի ԾԱԱ միջև սահմանված խոցելի տնային տնտեսություններ

9 Իրականացման շրջանակ

9.1 Դերեր և պարտականություններ

Մասդար Հայաստան CSG -ն կղեկավարի ԿՊՎԾ իրականացման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում Գլխավոր Կապալառուն կաջակցի դրա իրականացմանը, սակայն չի ակնկալվում, որ այն նշանակալից դեր կկատարի սույն Պլանի իրականացման գործում, բացի վերջնական հատակագծի, մոտեցող ճանապարհի, ՖՎ վահանակների մատակարարի, շինարարության ժամանակացույցի և տրանսպորտային ուղու վերաբերյալ նախագծային հատուկ տվյալներ տրամադրելը, ինչպես նաև Գլխավոր Կապալառուի և ենթակապալառուների կողմից զբաղվածության առաջնահերթ ապահովման պահանջներին համապատասխանելը:

Պաշտոն	Պարտականություններ / պատասխանատվություններ
Ծրագիրն իրականացնող ընկերության ԲԼՍ մասով ղեկավար	Ղեկավարել ԲՍԿՀ, այդ թվում՝ ԿՊՎԾ իրականացումը Անցկացնել կանոնավոր խորհրդակցություններ ՀԿՊ հետ՝ ԿՊՎԾ իրականացման առաջընթացն ապահովելու համար Վերահսկել բողոքների ուսումնասիրման և կարգավորման գործընթացը Աշխատել Ծրագրի ղեկավարության հետ ԿՊՎԾ համար պաշարների ժամանակին հատկացումն ապահովելու նպատակով Աշխատել Գլխավոր Կապալառուի ԲԼՍ մասով ղեկավարի և ՄՌ կառավարման ղեկավարի հետ՝ աշխատանքի տեղավորման նպատակով առաջնահերթ հավաքագրման պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար
Ծրագիրն իրականացնող ընկերության Համայնքի հետ Կապերի մասով Պատասխանատու	Կառավարել ծրագրի շրջանակում բողոքարկման մեխանիզմը, նախ և առաջ արձագանքելով բողոքարկողին, այնուհետև պահպանելով կապը բողոքարկողի հետ ամբողջ ընթացքում, ուսումնասիրել և փակել բողոքարկման հարցը Ստանալ և լրացնել բողոքարկման ձևաթղթերը, այդ մասին հաշվետվություն ներկայացնելով ԲԼՍ մասով ղեկավարին Ղեկավարել Կենսագործունեության վերականգնման միջոցառումների վերաբերյալ խորհրդակցումը, պլանավորումը, իրականացումը, փաստաթղթային ձևակերպումն ու վարումը Տեղեկացումը համայնքին առաջիկա գործունեությունների, քննարկումների, խորհրդակցությունների և ուսուցման դասընթացների վերաբերյալ Մասնավորապես, աշխատել խոցելի ԾԱՏ -երի հետ՝ ապահովելու համար, որ վերջիններիս մտահոգությունները հաշվի առնվեն ԿՎ միջոցառումները մշակելիս և որ նրանց մասնակցությունը դյուրին դարձվի Վարել շահագրգիռ կողմերի ներգրավման պլանն ու տվյալների բազան, ներառյալ խորհրդակցությունների, այդ թվում՝ իշխանության տեղական մարմինների և ԾԱԱ հետ կանոնավոր հանդիպումների արձանագրությունները
Մասդարի գլխամասի վերաբնակեցման մասով փորձագետ	Վերահսկել ԿՊՎԾ իրականացման գործընթացը Տրամադրել աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն ԲԼՍ մասով ղեկավարին և ՀԿՊ -ին ԿՊՎԾ իրականացման ընթացքում առաջացող ցանկացած խնդիրների առնչությամբ

Իշխանության տեղական մարմիններ	Աջակցել ԿՊՎԾ իրականացման գործընթացին հետևյալ գործողություններով՝ Դաշտադեմում ջրառոռգման ընդարձակման ծրագրի նախագծում, մրցույցթի անցկացում և վերահսկում Աջակցություն աշխատանքի տեղավորման համար թեկածուների համապատասխանության ստուգման և ընտրության հարցերում Առաջարկությունների և տեղեկությունների տրամադրում ուսուցման դասընթացների նախագծման նպատակով
Վարկատուի ԲևՍ խորհրդականներ	Կատարել ԿՊՎԾ իրականացման գործընթացի աուդիտ շինհրապարակ կանոնավոր այցերի և իրականացման փաստաթղթային հիմքերի ստուգման միջոցով
ԿՊՎԾ աուդիտորներ	Նախաձեռնել ԿՊՎԾ ավարտական աուդիտի կատարում հայաստանյան արտաքին անկախ և PS5-ԿՍ5 պահանջներին համապատասխանող փորձագետի կողմից՝ Կենսագործունեության վերականգնման միջոցառումների ավարտից հետո

9.2 Իրականացման ժամանակացույց

Ստորև ամփոփված է յուրաքանչյուր ԿՊՎԾ իրականացման ժամանակացույցը:

Աղյուսակ 4. Ժամկետագիր

Գործունեություն	Գործողություն	Ժամկետ
Քննարկումներ մանրամասն հետագա ԿՊՎԾ գործողությունների վերաբերյալ	Ներգրավում դասընթացների, անասնապահների պատսպարանների և զբաղվածության ապահովման առաջնահերթության մանրամասն հարցերի համաձայնեցման նպատակով	Աշխատանքերի մեկնարկի ծանուցման (ԱՄԾ) ամսաթվի համաձայնեցումից հետո, համայնքների ակտիվության ներգրավում սկսելով այն շինարարությունից մեկ ամիս առաջ և ավարտելով շինարարության մեկնարկից երկու շաբաթ հետո
	Ջրառոռգման ցանցի ընդարձակում և բարելավումներ Դաշտադեմում	Ծրագրի մանրամասները, նախագծման և կապալառուի գնանշման տվյալները պետք է տրամադրեն իշխանության տեղական մարմիններն իրենց ներքին ժամկետագրերին և պլանավորման պարբերաշրջանների համաձայն: ՀՆԸ պետք է որպես արձագանք ստացված տեղեկությունները տրամադրի ոչ ավելի, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում: Երբ հաստատվի, որ ջրառոռգման ծրագիրը համապատասխանում է ԿՊՎԾ պահանջներին, բյուջեն կհատկացվի հաշիվը ներկայացնելուց հետո ոչ ավելի, քան 8 շաբաթվա ընթացքում:
	Դեմ-առ-դեմ հանդիպումներ խոցելի ԾԱՏ –երի հետ	Խոցելի ԾԱՏ -երի նույնականացումը և նրանց հետ դեմ-առ-դեմ հանդիպումները պետք է սկսվեն շինարարությունից մեկ ամիս առաջ և ավարտվեն շինարարությունը սկսելուց հետո երկու ամսվա ընթացքում
ԿՊՎԾ միջոցառումների իրականացում	Պատասպարանների կառուցում համայնքային արոտավայրերում	Շինարարությունը սկսելուց հետո 4 ամսվա ընթացքում՝ ըստ համայնքներից պաշտոնական թույլտվության ստացման

	Աշխատանքի առաջնահերթ տեղավորման առաջնահերթություն անասնապահական տնտեսություններին	Համակարգը պետք է գործի գցվի շինարարության սկզբից և իրականացվի շինարարության ամբողջ ընթացքում
	Ուսումնական դասընթացներ կանանց համար	Դասընթացները պետք է մեկնարկեն շինարարությունը սկսվելուց հետո 1 ամսվա ընթացքում, ավարտվեն ու գնահատվեն 9 ամսվա ընթացքում
	Ուսումնական դասընթացներ անասնապահների համար	Դասընթացները պետք է մեկնարկեն շինարարությունը սկսվելուց հետո 1 ամսվա ընթացքում, ավարտվեն ու գնահատվեն 9 ամսվա ընթացքում
	Ջրառոռոգման ցանցի ընդարձակում և բարելավումներ Դաշտադեմում	Աշխատանքները պետք է մեկնարկեն ծրագրի ավարտից, համայնքապետարանի մրցույթից և Հատուկ նշանակության ընկերության (ՀՆԸ) կողմից միջոցների հատկացումից հետո
Մշտադիտարկում	Բավարարվածության մակարդակի հետազոտում	Յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո պետք է իրականացվի դասընթացների մասնակիցների բավարարվածության մակարդակի հետազոտում
	Համայնքային հետազոտություն	Համայնքային հետազոտությունը պետք է ավարտվի շինարարությունը սկսվելուց հետո 2 տարվա ընթացքում՝ Կենսագործունեության միջոցների վերականգնման գործողությունների իրականացումից հետո: Առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացվի ազդեցության տեղանքի ցանկապատմանն ու ԿՊՎԾ միջոցառումների արդյունավետությանը
	Աուդիտ ըստ հողերի որակի և տեղանքի գնահատման LESA համակարգի	Հողերի որակի և տեղանքի գնահատման LESA համակարգին համապատասխան աուդիտ պետք է իրականացվի՝ համաձայն ԲՍԳՊ –ում նշված պարբերականության
	ԿՊՎԾ ավարտական աուդիտ	Պետք է իրականացվի ԿՊՎԾ բոլոր միջոցառումների, բավարարվածության մակար-դակի և համայնքի անդամների կարծիքի հետազոտումների ավարտից հետո: Պետք է ավարտի բերվի շինարարությունը սկսվելուց հետո՝ ոչ ուշ, քան 26 ամսվա ընթացքում:

9.3 Բյուջե

ԿՊՎԾ իրականացման բյուջեն ամփոփ նկարագրված է ստորև:

Աղյուսակ 5. Բյուջեն

	Գործունեություն	Բյուջետային նախահաշվարկ
1	ԲևՍ ղեկավար և ՀԿՊ	Ներառված է որպես ՀՆԸ աշխատակազմի բյուջեի մաս
2	ԾԱԱ -նց և իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչների հետ ԿՊՎԾ իրականացման հետ կապված հարցերով խորհրդակցությունների մասնակցության նպաստում՝ տպագիր նյութեր, թեթև ուտեստներ և զովացուցիչ ըմպելիքներ	2,000 ԱՄՆ դոլար
3	Ջրառոռգման համակարգի բարելավումներ Դաշտադեմում	30,4 միլիոն ՀՀ դրամ (79,700 ԱՄՆ դոլար՝ ըստ 08.2023թ. գործող փոխանակման գործակցի)
4	Ուսումնական դասընթացներ անասնապահների համար	8,000 ԱՄՆ դոլար՝ ներառյալ դասընթացավար մասնագետները (15 օր x 400 ԱՄՆ դոլար = 6,000 ԱՄՆ դոլար) և ուսումնական նյութեր՝ (2,000 ԱՄՆ դոլար)
5	Ուսումնական դասընթացներ կանանց համար	8,000 ԱՄՆ դոլար՝ ներառյալ դասընթացավար մասնագետները (15 օր x 400 ԱՄՆ դոլար = 6,000 ԱՄՆ դոլար) և ուսումնական նյութեր՝ (2,000 ԱՄՆ դոլար)
6	Պատսպարաններ անասնապահների համար	3,000 ԱՄՆ դոլար x 4 պատսպարան = 12,000 ԱՄՆ դոլար: Սպասարկման բյուջե՝ 5,000 ԱՄՆ դոլար
7	Աշխատանքի տեղավորման առաջնահերթություն անասնապահական տնտեսությունների անդամների համար	Վարչական ծախքեր և աշխատավարձի ծախսեր ՀՆԸ և Գլխավոր Կապալառուի համար
8	Օժանդակություն ԾԱՏ -երին	10,000 ԱՄՆ դոլար
9	Վարկատուի ԲևՍ խորհրդական	Առանձին բյուջե ԲևՍ բոլոր ոլորտների վերահսկման համար
10	ԿՊՎԾ ավարտական աուդիտ	5,000 ԱՄՆ դոլար (10 օր x 400 ԱՄՆ դոլար գումարած տրանսպորտ և օրապահիկ)

2, 4-6, 8 և 9 կետերում նշված գործողությունների համար բյուջեին ավելացվում է 20% չնախատեսված ծախսերի համար (50,000 ԱՄՆ դոլար + 20% = 60,000), որը կարող է ենթարկվել գնային տատանումների:

ԿՊՎԾ ընդհանուր բյուջեն **139,700 ԱՄՆ դոլար է** (ենթակա է փոխարժեքի տատանումների

Դաշտադեմում ոռոգմանն աջակցության գումարի մասով, ինչը համաձայնեցված է ՀՀ դրամով): Այն չի ներառում նվիրաբերվող 320 միլիոն ՀՀ դրամ՝ 838,000 ԱՄՆ դոլար գումարը, որն ընկերությունը վճարել է համայնքներին որպես պետության կողմից հողի ձեռքբերում, ոչ որպես կառավարության լրացուցիչ բյուջետային աջակցություն համայնքներին, և Ծրագրի արդյունքում տրամադրվող աջակցության ընդհանուր գումարը գերազանցում է 2 միլիարդ ՀՀ դրամը / 5.2 միլիոն ԱՄՆ դոլարը:

10 Բողոքարկման մեխանիզմ

ՇԿՆՊ –ում ներառված է բողոքարկման մանրամասն մեխանիզմ Ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ԾԱԱ համար: Բողոքարկման մեխանիզմը հրապարակայնորեն ներկայացվել է համայնքների հետ բոլոր խորհրդակցությունների ժամանակ և լուսաբանվել համայնքներին բաժանված բրոշյուրներում: Համայնքներում տեղադրվել են նաև բողոքների արկղեր, որոնք հասանելի կմնան ծրագրի իրականացման ամբողջ ժամկետի ընթացքում:

11 Մշտադիտարկում և գնահատում

Սույն ԿՊՎԾ -ի ներքին մշտադիտարկումն ու Հիմնական Կատարողական Ցուցանիշները ներառում են հետևյալ կետերը.

- Իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչների, ԾԱԱ –նց ու կանանց հետ ԿՊՎԾ միջոցառումների իրականացման մշակման վերաբերյալ քննարկումների գործընթացի փաստաթղթավորում
- Դաշտադեմում ոռոգման ցանցի բարելավումների շահառուների թիվը, ներառյալ մեկ հետազոտություն հողագործությանն ու անասնապահությանը ցուցաբերվող օգուտների (եթե կիրառելի է) քանակական գնահատման նպատակով
- Անասնապահական տնտեսությունների անդամների՝ առաջնահերթ կարգով աշխատանքի ընդունման շահառուների թիվը
- Անասնապահների և կանանց համար տրամադրվող ուսումնական դասընթացներին մասնակցողների թիվը
- Անասնապահների և կանանց համար տրամադրվող ուսումնական դասընթացներին մասնակցողների բավարարվածության մակարդակի հետազոտումը
- ԿՊՎԾ իրականացման գործընթացի վերաբերյալ բողոքների թվաքանակը
- Բողոքարկողի բավարարվածության հիմքով փակված բողոքների թվաքանակը
- ԿՊՎԾ գործընթացի արտաքին մշտադիտարկման ընթացքում թողարկված անհամապատասխանության դեպքերի թվաքանակը

Վերը թվարկված ՀԿՑ -երի մասին կներկայացվեն ամսական հաշվետվություններ, մինչև ԿՊՎԾ իրականացումը կավարտվի և կհաստատվի ավարտական աուդիտով: